



րը, որ որոշ չափով սկսուել էին դեռևս Թ.-ԺԱ. դարերից, իրենց յանգուցալուծումն են գտնում յատկապէս միջին հայերէնում:

Հետեւաբար, յատկապէս Թ.-ԺԱ. դարերում նախդրագործածութեան հետ կատարուող փոփոխութիւնները հիմնովին ընկալելու եւ բացատրելու համար անհրաժեշտաբար հարկ է քննել նաեւ ԺԲ.-ԺՁ. դարերի միջին հայերէնով գրած մի քանի բանաստեղծների չափածոյ գործերը՝ Ներսէս Շնորհալու «Առակք»-ը, Յրիկի, Խաչատուր Կեչառեցու տաղերը, Նահապետ Քուչակի հայրէնները: Այս ամէնը հնարաւորութիւն է տուել բացայայտելու միջին հայերէնի երկու ենթաշրջաններում (ԺԲ.-ԺԴ. եւ ԺԵ.-ԺՁ. դարեր) նախդրագործածութեան անհատականներն ու տարբերութիւնները՝ կապուած լեզուի կատարուող էական տեղաշարժերի հետ:

Կազմուել են համեմատական աղիւսակներ, որոնք եւս հիմք են հանդիսացել համապատասխան եզրայանգումների համար:

**Բ. Նախդրագործածութեան իմաստային դրսևորումները՝ գրաբարի համեմատութեամբ**

Գրաբարի նախդիրները եւ նախադրութիւնները կանոնաւորապէս գործածուել են 5-11-րդ դարերի մատենագրութիւնում եւ, բնականաբար, նաեւ բանաւոր խօսքում: 11-րդ դարից յետոյ, երբ աստիճանաբար գրաբարը դադարեց խօսակցական լեզու լինելուց, եւ սկսեց ձեւաւորուել միջին գրական հայերէնը, նախդրագործածութիւնը ենթարկուեց որոշակի փոփոխութեան: Այստեղ, ի տարբերութիւն այլոց, բացառում ենք 12-16-րդ դարերում գրաբարով գրուած մատենագրութիւնը, որում, չնայած որոշ խաթարումների, նախդիրներն ու նախադրութիւնները շարունակուել էին կատար-

ել իրենց հիմնական գործառոյթը: Այնպէս որ, գրելով միջին հայերէնում նախդրագործածութեան մասին, նկատի չենք ունեցել ԺԲ.-ԺՁ. դարերի գրաբարալեզու գրուածքները, որոնց լեզուական քննութիւնը, թեկուզ եւ նախդրագործածութեան առումով, բոլորովին այլ խնդիր է:

Քննելով Ե.-ԺԱ. դարերի պատմագրական երկերում եւ Ե.-Ժ դարերի չափածոյ ստեղծագործութիւններում նախդրագործածութիւնը (այստեղ նկատի ունենք հայ ժողովրդական բանահիւսակային չափածոն, Սահակ Պարթեւի, Մեսրոպ Մաշտոցի եւ Խորենացու՝ մեզ հասած չափածոյ գրուածքները, Ձ.-է. դարերի նշանաւոր բանաստեղծ Կոմիտաս Կաթողիկոսի «Անձինք նուիրեալք» շարականը, է. դարի յայտնի բանաստեղծ Դաւթակ Քերթովի «Ողբք»-ը եւ Ժ. դարի հանճարեղ բանաստեղծ Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան» գրուածքը), բացայայտելով Ե.-ԺԱ. դարերի ամբողջ մատենագրութեան նախդրագործածութեան յաճախականութիւնը, թեք հոլովների հետ նրանց դրսևորած իմաստներն ու շարահիւսակային կիրառութիւնները՝ ինքնուրուիքեան անհրաժեշտ համարեցինք անդրադառնալ նաեւ միջին գրական հայերէնում նախդրագործածութեան դրսևորումներին: Ինչո՞ւ: Այն պատճառով, որ նախդրային կառոյցները եւ յատկապէս Թ.-ԺԱ. դարերում նրանց կրած փոփոխութիւններն իրենց յանգուցալուծումն են ստանում միջին հայերէնում, իսկ դա բոլորովին էլ պատահականութեան արդիւնք է:

Միջին հայերէնը ԺԲ.-ԺԴ. եւ ԺԵ.-ԺՁ. դարերի ենթաշրջաններում կրել է որոշակի փոփոխութիւններ, որոնք դրսևորուել են նաեւ նախդրագործածութեան գործընթացում:

Եթէ 12-14-րդ դարերի միջին գրա-

կան հայերէնում առաւել չափով էին դրսևորուում գրաբարի քերականական ներթափանցումները, այդ թւում նաեւ՝ նախդիրների կիրառութեան գրաբարեան օրինաչափութիւնները, ապա 15-16-րդ դարերում աստիճանաբար պակասում է գրաբարի ուղղակի ազդեցութիւնը, ուժեղանում են ժողովրդախօսակցական, բարձրին, քերականական եւ հնչիւնափոխական ներազդեցութիւնները, որոնց հետեւանքով էլ նախդրագործածութիւնն առաւել չափով է դառնում արհեստական, սաստկանում են նախդրագրուել կիրառութիւնները: Սպասուելիք նախդրային կառոյցների փոխարէն գործածուում են նաեւ նախդրագրուել կապակցութիւններ, նախդրային կառոյցները փոխարինում համապատասխան հոլովներով եւ կապերով, այսինքն՝ յաճախակի խախտում են նախդրագործածութեան օրինաչափութիւնները:

Իհարկէ, սա չի նշանակում, որ միջին հայերէնում իրենց որոշակի դերն ու նշանակութիւնը բոլորովին կորցրել են նախդիրները:

Եւ ճիշտ էջը լինի այս փուլում բոլորովին հրաժարուել նախդիրների կիրառութեան ուսումնասիրութիւնից, ինչպէս դա անում է Ս. Անթոսեանը «Ակնարկներ միջին գրական հայերէնի պատմութեան» արժէքաւոր աշխատութիւնում: Այստեղ հեղինակը գրում է. «քննել միջին հայերէնում օգտագործուած նախդիրները, նոյնն է, թէ՛ քննել գրաբարի նախդիրները, որոնք գրաբարի՝ անցեալի եւ ներկայ քերականութեան գրքերում այնքան հանգամանօրէն ուսումնասիրուած են»<sup>2</sup>: Եւ որպէս այդպիսիք նշում է երկու իսկապէս արժէքաւոր աշխատութիւններ՝ Ա. Բագրատունու «Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց»-ը եւ Ա. Աբրահամեանի «Գրա-

բարի ձեռնարկը»: Սակայն այս կարծիքում երկու թերացում կայ՝

ա) Գրաբարի նախդիրները միջին հայերէնում, այնուամենայնիւ, դրսևորում են գործածութեան որոշակի իւրախտակութիւններ<sup>3</sup>:

բ) Ս. Անթոսեանի գրածից հնարաւոր է եզրակացնել, որ գրաբարի նախդիրները եւ նրանց գործածութիւնն ուսումնասիրուած են հանգամանօրէն, եւ, կարծէք, այլեւս անելիք չկայ, որը ճիշտ էջ, ապացոյց՝ Վ. Քոսեանի արժէքաւոր ուսումնասիրութիւնը<sup>4</sup>, մեր նախորդ<sup>5</sup> ու այս աշխատութիւնը եւ, իհարկէ, հետագայում ակնկալուող նոր ուսումնասիրութիւնները:

Այդպիսին է, օրինակ, Հ. Պօղոս Գոճանեանի «Առ նախդիրի գործածութիւնը դասական գրաբարի մէջ եւ ներգոյականը որպէս ուրոյն հոլով» արժէքաւոր ուսումնասիրութիւնը<sup>6</sup>, որտեղ բոլորովին նորովի են ներկայացուած գրաբարում յաճախական գործածութիւն ունեցող «առ» նախդիրի միջոցով դրսևորուող շարահիւսակային կիրառութիւնները:

Այնուամենայնիւ, միջին հայերէնում նախդիրների կիրառութեան վերաբերեալ Ս. Անթոսեանը մի համառօտ անդրադարձ է կատարել՝ դիտարկելով 12-14-րդ եւ 15-17-րդ դարերը եւ եզրակացրել՝

ա) Նախդիրների կիրառութեան տեսակետից դժուար է անհատական նախասիրութեան սահմանները որոշել, մինչդեռ կապերի կիրառութեան ժամանակ նկատուում են որոշակի տարբերութիւններ:

բ) Միջին հայերէնում գրաբարի համեմատութեամբ չկան նախդիրների կիրառութեան հարուստ դրսևորումներ:

Օրինակ՝ առ նախդիրի՝ «բացառական եւ գործիական հոլովների հետ կիրառութեան դէպքեր չեն հանդիպում»: Մինչ-

դեռ, պէտք է ասել՝ Վարդանի առականբրում կայ. «Ցանեաց առ գետովն բակլայ եւ սիսեռն» (Վարդան, Առականեր, Բ, էջ 193): «Գնաց ննջեաց առ հովաննաւ յանգուցեալ եկեղեցւոյ միոյ»<sup>7</sup>:

Ս. Անթոսեանը շարունակում է՝ «Զ նախդիրը Հայցական Հոլովի հետ որոշեալ առման դէպքում լայնօրէն կիրառւում է, ... մինչդեռ տրական, բացառական եւ գործիական Հոլովների հետ կիրառութեան դէպքեր չեն հանդիպում»: Միայն Մարտիրոս Ղրիմեցու մօտ է մէկ օրինակ գագործիական կառոյցով.

«Անկեալ զպարանոցաւ նոցին հեկեկան»:

Մինչդեռ Վ. Քոսեանը նշում է նման օրինակներ բացառական եւ գործիական Հոլովներով<sup>8</sup>:

«Խանդաղատեալ փարէր նա զայգեգործէն» (յանգման անուղղակի խնդիր փարել բայի թեւադրանքով), (Խաչատուր Կեչառեցի, 134):

«Կախեցաւ ինքն զթիկանց ոչխարին» (Վարդան, Առականեր, Բ, էջ 259):

Վերաբերութեան իմաստով եւս գործածութիւններ կան Խաչատուր Կեչառեցու («Կարդաց եւ իմացաւ գողջունէ նորին», - էջ 137), Վարդան Այգեկցու («Տրտնջէս զհնէն», - էջ 69, «չարախօսեաց զմմանէ», - էջ 114), Յովհաննէս Երզնկացու («ԶԱստուծոյ անճառէն ով իշխէ խօսել», - էջ 184), Սմբատ Սպարապետի («Պատմեցին Սենեքերիմայ զգանազան կերպարանաց այլազգեացն», - «Պատմութիւն Յունաց», էջ 27) եւ այլ գրուածքներում:

Օրինակներ կան եւ գործիական Հոլովով:

«Տերեւ թզենոյ զհնէ սփածայ» (Յովհ. Երզնկացի, 230): «Պատեցաւ զմիջով լծվարին» (Վարդան, Առակք, էջ

154): «Առեալ զօճն արկանէր զպարանոցաւ մանկանն» (ն. տ., 226):

Ինչպէս նկատելի է, սրանք գրաբարեան ներթափանցումներ են եւ ոչ թէ բուն միջին Հայերէնի քերականութեանը յարիր գործածութիւններ:

Այս հանգամանքն է, թերեւս, պատճառը, որ Քոսեանը նման օրինակներ է քաղել նաեւ նշուած հեղինակների դարաշրջաններում ապրած գրաբարագիր մատենագիրների երկերից, որը ճիշտ մօտեցում է:

Վերոյիշեալ անճշտութիւնները ցոյց են տալիս, որ Ս. Անթոսեանն առանձնապէս չի խորացել միջին Հայերէնում եղած նախդրագործածութեան հանգամանքներում, քանի որ նրա տեսադաշտում առաջին հերթին բուն միջին Հայերէնն է եղել, նրանում եղած կապային կիրառութիւնները եւ այլն:

Միջին Հայերէնի կազմութեանը, հնչիւնաբանութեանը, բառագիտութեանը, ձեւաբանութեանն ու շարահիւսութեանը նուիրուած կան բազմաթիւ աշխատութիւններ, որոնցում, սակայն, գրաբարեան նախդիրների դերի ու նշանակութեան մասին չկան հիմնաւոր վերլուծումներ, պարզապէս հարկ եղած դէպքում անդրադարձել են դրանց՝ յաճախ անելով շատ արժէքաւոր դիտողութիւններ ու եզրայանգումներ: Այս տեսակետից կարեւորում են ԳԱ լեզուի ինստիտուտի հրատարակած «Ակնարկներ միջին գրական Հայերէնի պատմութեան» երկհատորեակը (Եր., Ա, 1972, Բ, 1975), ուր ուշագրաւ դիտողութիւններ կան միջին Հայերէնում գրաբարեան նախդիրների գործածութեան վերաբերեալ: Օրինակ, այնտեղ ասուած է, որ միջին Հայերէնում տեղի են ունեցել նախդրագործածութեան որոշ փոփոխութիւններ, որոնցից կարեւորում են «գ եւ ի(յ) նախդիրների գոր-

ծածման աստիճանական սահմանափակումը եւ աննախդիր կազմութիւնների տարածումը»<sup>9</sup>:

Այստեղ իրաւացիօրէն գրուած է, որ սկզբնական շրջանում Հայցականի գ-ն դեռեւս աւելի կենսունակութիւն է ցուցաբերում, քան ի-ն, նոյնիսկ 14-16-րդ դարերից արդէն վկայուած են առանց ի(յ) նախդիրի բացառական գործածութեան բազմաթիւ օրինակներ, չնայած կան եւ բացառականի կազմում այլ նախդիրների գործածութիւններ:

Նախդիրների գործածութեան վերաբերեալ հետաքրքիր դիտողութիւններ կան Արսէն Այտընեանի «Քննական քերականութիւն» բարձրարժէք աշխատութիւնում<sup>10</sup>:

1984 թ. Վ. Քոսեանը հրատարակեց «Միջին Հայերէնի բառակապակցութիւնները» իր տեսակի մէջ եզակի ուսումնասիրութիւնը, որտեղ «Բայական բառակապակցութիւններ» գլխում ուղղակիօրէն քննել է «Բայի լրացումները նախադրութեամբ կառոյցներով» եւ «Բայի լրացումները նախդրաւոր կառոյցներով» հիմնահարցերը: Նա մէկ առ մէկ ներկայացրել է բոլոր թեք Հոլովներով ինչպէս նախադրութեամբ, այնպէս էլ նախդրաւոր կառոյցներով, բայի խնդիր եւ պարագայ լրացումները՝ միջինՀայերէն աղբիւրներից քաղելով համապատասխան օրինակներ:

Այս արժէքաւոր աշխատութեան՝ նախդրագործածութեան վերաբերեալ մենք ունենք երկու դիտողութիւն՝

1) Վ. Քոսեանը, մեզ անհասկանալի պատճառով միջին Հայերէնում նախդրաւոր կառոյցների մասին իր շարադրանքում (էջ 158-186), (ինչպէս երեւում է, ոչ միայն այստեղ), 44 օրինակներ է քաղել նաեւ 12-17-րդ դարերի մի շարք հե-

ղինակների՝ գրաբարով գրուած աշխատութիւններից, մասնաւորապէս Արիստակէս Լաստիվերցուց (11-րդ դ.) 3 օրինակ, Մատթէոս Ուռհայեցուց (11-12-րդ դ.)՝ 24, Կիրակոս Գանձակեցուց (13-րդ դ.)՝ 10 եւ Առաքել Դաւրիթեցուց (17-րդ դ.)՝ 7 օրինակ:

Նշենք դրանցից մի քանիսը.  
ա) ընդ+տրական=միասնութիւն՝  
«Ընդ օծութեանն ընկալաւ ոգի զօրութեան եւ մարգարէութեան»:

ի+Հայցական=միջոցի անուղղակի խնդիր:

բ) ընդ+գործիական=ուղեւորութեան տեղ

«Եկին ընդ մերով իշխանութեամբ»:

ընդ+գործիական=ձեւի պարագայ  
«Զամենայն սահմանս աշխարհին Հոռոմոց արար ընդ իշխանութեամբ իւրով» (Ուռհայեցի):

գ) ընդ+տրական=համապատասխանութեան

«Ետուն եւ գիր ընդ դեմին իւրեանց»:

ընդ+Հայցական=վերաբերութեան խնդիր

«Կուրացուցանեն զաչս նորա ածխով, վրէժխնդրութիւն լեալ յԱստուծոյ անիրաւ մահուանցն զոր արար ընդ Յուսիկ եւ ընդ Դանիէլ» (Կիրակոս Գանձակեցի):

Կիրակոս Գանձակեցուց վերցրած միակ օրինակով ցանկանում է ապացուցել, որ միջին Հայերէնում ի+հայցական կառոյցով կազմուել է նաեւ փոխադարձ կապի անուղղակի խնդիր (էջ 181):

«Փեսայացոյց զնա ի դուստր իւր»:

Այդպէս էլ նոյն հեղինակից քաղած միակ օրինակով «Հաստատում է», որ միջին Հայերէնում ընդ+գործիական կառոյ-

ցով կազմակերպել է մատուցման անուղղակի խնդիր (էջ 175):

«Այլքն անձնատուր եղեն ընդ ձեռամբ վիշապին»:

Եւ սրանք եզակի դէպքեր չեն:

Իհարկէ, նման օրինակներով միջին Հայերէնում նախդրագործածութիւնը որոշելը կարող է թիւրիմացութիւն ստեղծել:

2) Վ. Քոսեանը գրում է, որ տարբեր նախդրաւոր կառոյցներով արտայայտուած են նոյնպիսի իմաստներ՝ մի երեւոյթ, որը կար նաեւ գրաբարում, սակայն միջին Հայերէնում աւելի է խորացել համահարթման այս գործընթացը: Եւ, որպէս ապացոյց, մէջբերում է կատարել 13-րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց»-ի (Թիֆլիս, 1909), թէ ինչպէս ընդ+տրականը կարող է նոյն իմաստով գործածուել ըստ+տրականի փոխարէն<sup>11</sup>:

«Որ կոչի ինօսնաբերդ՝ ընդ բարբառոյն պարսից» (էջ 255): «Ետուն եւ գիր ընդ դեմին իւրեանց» (էջ 270): «Զոր իոյականաց բերդ կոչէին, ըստ պարսկական բարբառոյն» (էջ 298): Սակայն պարզուած է, որ առաջին երկու օրինակներում ընդ նախդիրը սոսկ ձեռագրային տարբերացում է, բնագրայինը ըստ նախդիրն է, որը կայ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց»-ի գիտական հրատարակութիւնում (Երեւան, 1961, էջ 265, 269, հմմտ. էջ 313):

Այնուամենայնիւ, այս դիտողութիւնները լոկ մասնակի են եւ չեն կարող ստուերել սոյն աշխատութեան հարուստ ձեռքբերումները:

Մեր ուսումնասիրութիւնում, հիմք ընդունելով Վ. Քոսեանի սոյն աշխատութեան՝ նախդիրներին վերաբերող շարադրանքը, գրաբարի նախդիրներ մասին

մեր հրատարակած ուսումնասիրութիւնը, որտեղ ներկայացուած են 5-11-րդ դարերի մեր պատմագրական երկերում նախդիրների գործածութեան յաճախականութիւնը եւ իմաստային դրսեւորումները, նկատի ունենալով նաեւ միջին Հայերէն բնագրերում նախդրագործածութեան վերաբերեալ մեր դիտողութիւնները, կազմելով համեմատական աղիւսակներ, փորձել ենք ամփոփել եւ ընդհանրացնել «Նախդրագործածութիւնը միջին Հայերէնում» գրաբարի համեմատութեամբ» հիմնահարցը (տե՛ս աղիւսակ 1):

Նախապէս հանգամանօրէն քննելով այլոց գրուածքներում եւ 13-14-րդ դարերի տաղերգու Ֆրիկի տաղերում, ինչպէս նաեւ 16-րդ դարի ականաւոր բանաստեղծ Նահապետ Քուչակի հայրէններում եղած նախդրագործածութեան թէ՛ յաճախականութիւնը եւ թէ՛ իմաստային կիրառութիւնները, յանգել ենք որոշ եզրակացութիւններ:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Գրաբարի 6 նախդիրները գործածուել են նաեւ միջին Հայերէնում՝ տարբեր յաճախականութեամբ:

2. Հինգ թեք հոլովների հետ գրաբարում կայ 22, միջին Հայերէնում՝ նոյնքան գործածութիւն:

Գրաբարի համեմատ միջին Հայերէնում չկայ 9 նախդիրի գործածութիւն տրականի հետ: Աւելացել են առ ի՝ տրականի հետ, ընդ ի՝ հայցականի հետ, ց՝ բացառականի հետ (°) գործածութիւնները:

Այսինքն՝ գրաբարի նախդիրները կիրառուած են նաեւ միջին Հայերէնում, ինչպէս նաեւ 12-16-րդ դարերում գրաբարով գրուած գործերում:

Կան տարբերութիւններ՝ ա) Յաճախ որոշ նախդիրներ գործա-

ծուած են ձեւականօրէն կամ մէկը միւսի փոխարէն:

բ) Երբեմն խախտուել է նախդիրների շարադասութիւնը:

գ) Եւ, ամենակարեւորը, կան տարբերութիւններ նախդրային կապակցութիւններով իմաստների դրսեւորման, յատկապէս շարահիւսական-լրացական կիրառութիւնների նեղացման, որոշ դէպքերում՝ փոփոխման գործառոյթում, որոնք արտացոլուած են յաջորդ աղիւսակում (տե՛ս աղիւսակ 2ա, 2բ):

3. Նախդիր+հոլովուող բառ կապակցութեան խնդրային շարահիւսական կիրառմամբ գրեթէ հաւասար են գրաբարն ու միջին Հայերէնը, որոնց յարաբերութիւնն է՝ I - 61, II - 59:

4. Միջին Հայերէնում խնդրային իմաստների դրսեւորմամբ առաւել գործունէ է հայցական հոլովը՝ I - 27, II - 36 յարաբերութեամբ:

Երկրորդ տեղում է տրական հոլովը, սակայն այլ յարաբերութեամբ՝ I - 18, II - 13:

Այլ է գործիական հոլովում՝ I - 8, II - 4, բացառականում եւս նկատուած է նախդրագործածութեան թուլացում՝ I - 7, II - 5 յարաբերութեամբ:

5. Ըստ առանձին նախդիրների գործածութեան՝ առկայ է հետեւեալ պատկերը՝

- առ - I - 18, II - 8
- գ - I - 6, II - 10
- ընդ - I - 20, II - 19
- ըստ - I - 4, II - 3
- ի(յ) - I - 10, II - 14
- ց - I - 3, II - 3

Այսինքն՝ աւելի գործունէ են առ (I-18, II-18), գ (I-6, II-10), ի(յ) (I-10, II-14) նախդիրները: Միւս նախդիրները

շարահիւսական դրսեւորմամբ գրեթէ հաւասար են:

6. Գրաբարի համեմատութեամբ դրսեւորուած տեղաշարժերն են՝

1) Աւելացել են՝

ա) Հաղորդման անուղղակի խնդիր՝ ընդ նախդիրով եւ տրական, հայցական հոլովներով, ընդը գ+հայցականով:

բ) Համապատասխանութեան անուղղակի խնդիր՝ ի+տրական եւ ի, ընդ, առ ի+հայցական կառոյցներով:

գ) Յանգաման անուղղակի խնդիր՝ առ, գ, առ ի, ընդ ի+հայցական կառոյցներով:

դ) Միասնութեան անուղղակի խնդիր՝ ըստ+տրական կառոյցով:

ե) Միջոցի անուղղակի խնդիր՝ գ+հայցական, գ+գործիական կառոյցներով:

զ) Սահմանափակման անուղղակի խնդիր՝ գ, ց+բացառական կառոյցով:

է) Վերաբերութեան անուղղակի խնդիր՝ գ, ի+հայցական, ընդ+բացառական կառոյցներով:

ը) Ուղղութեան անուղղակի խնդիր՝ գ, առ ի, ընդ ի+հայցական կառոյցներով:

թ) Փոխարինութեան անուղղակի խնդիր՝ ի+տրական կառոյցով:

2) Պակասել են՝

ա) Համեմատութեան անուղղակի խնդիր՝ առ+գործիական կառոյցով:

բ) Յանգաման անուղղակի խնդիր՝ առ, գ+տրական, ընդ, ց+հայցական, գ, ընդ+գործիական կառոյցներով:

գ) Յաջորդականութեան անուղղակի խնդիր՝ ըստ+բացառական կառոյցով:

դ) Մատուցման անուղղակի խնդիր՝ առ+հայցական կառոյցով:

ե) Միասնութեան անուղղակի խնդիր՝ առ+տրական, առ+հայցական կառոյցներով:

զ) Միջոցի անուղղակի խնդիր՝ ընդ+հայ-

ցական կառույցով:

է) Սահմանափակման անուղղակի խնդիր՝ առ, ընդ, ըստ+տրական, առ, առ ի(յ)+բացառական կառույցով:

ը) Վերածման անուղղակի խնդիր՝ ընդ+տրական կառույցով:

թ) Ուղղութեան անուղղակի խնդիր՝ ընդ+տրական, գ+բացառական, գ+գործիական կառույցներով եւ այլն:

Սոյն համադրումը ցոյց է տալիս, որ գրաբարի համեմատութեամբ միջին Հայերէնում նախդրագործածութեամբ անուղղակի խնդիրները կիսով չափ ենթարկուել են փոփոխութեան. ըստ հոլովների՝ նախդիրների գործածութիւնը տեղ-տեղ ե՛լ պակասել է, ե՛լ աւելացել: Իսկ սա յուշում է, որ գրաբարի նախդրագործածութիւնը միջին Հայերէնում այս դէպքում պահպանուել է կիսով չափ, իսկ միւս կէսը ենթարկուել է լուրջ փոփոխութեան (տե՛ս աղիւսակ 3):

Գրաբարի համեմատութեամբ միջին Հայերէնում նախդրագործածութիւնը պարագայակազմութեան իմաստով որոշակի փոփոխութեան է ենթարկուել: Օրինակ, 45 գրաբարեան պարագայական կազմութիւններից մնացել է ընդամենը 33-ը (տե՛ս աղիւսակ 4):

Սոյն աղիւսակից երեւում է, որ յատկապէս առ, ըստ, գ, ց նախդիրները միջին Հայերէնում սակաւ են գործածուել, իսկ ընդ, ի նախդիրները յաճախականացման հակում ունեն:

Նորամուծութիւններ են երբեմն ց նախդիրը բացառական հոլովի հետ՝ տեղի պարագայի, ընդ+հայցական կապակցութեամբ՝ պայմանի պարագայի, առ ի+հայցական տեղի պարագայի դրսեւորմամբ:

Ներկայացւում են նաեւ խնդրային եւ պարագայական իմաստների դրսեւորումները միջին Հայերէնում՝ գրաբարի համեմատութեամբ:

րումները միջին Հայերէնում՝ գրաբարի համեմատութեամբ:

**II. ՆԱԽԳՐԱԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ ԺԲ. ԺՁ ԴԱՐԵՐԻ ՄԻՋԻՆՀԱՅԵՐԷՆԻ ՉԱՓԱԾՈՅՈՒՄ՝ ԳՐԱԲԱՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԵԱՄԲ**

**1. ՆԱԽԳՐԱԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ ՆԵՐՍԷՍ ԾՆՈՐՀԱԼՈՒ (1098-1173) «ԱՌԱԿՔ»-ում<sup>12</sup>**

Յաճախականութեամբ եւ շարահիւսական իմաստների դրսեւորման բազմազանութեան առումով բաւականին սահմանափակ է նախդրագործածութիւնը ներսէս Ծնորհալու «Առակք» ժողովածոյում:

Բոլորովին չեն կիրառուել առ, ընդ, ըստ, ց նախդիրները: Առանձնապէս գործուն են գ եւ ի նախդիրները, որոնք, սակայն, չեն գործածուել բոլոր համապատասխան հոլովներով: Չնախդիրը դրուել է միայն հայցական հոլովով, եւ ընդամէնը մէկ անգամ է կազմուել պատմական բացառականը, իսկ ի նախդիրը սահմանափակ քանակով դրուել է տրականով, անխտիր կազմուել է բացառական հոլովը, առաւել շատ դրուել է հայցականով, նաեւ կազմել են բայական յարադրութիւններ՝ ոճական կիրառութեամբ: Նախդրագործածութեան այսպիսի սահմանափակումը, հոլովների միջոցով համապատասխան շարահիւսական կիրառութիւնների դրսեւորումը բնորոշ են պարզ ու ժողովրդախօսակցական լեզուով հիւսուած ստեղծագործութիւններին: Գրաբարով գրուած բազմաթիւ ստեղծագործութիւնների հեղինակ, նշանաւոր հոգեւոր գործիչ-բանաստեղծը լատեղեակ էր հին Հայերէնի նախդրագործածութեանը եւ հմուտ էր նաեւ միջին Հայերէնում, որի լաւագոյն ապացոյցը նրա հանելուկներն են: Հետեւաբար, գրելաճի նման պարզութեան, ուրեմն եւ

նախդրագործածութեան պարզունակ ձեւերին դիմելը կատարել է միանգամայն նպատակամղուած: Ինքներս էլ մեր ուսումնասիրութեամբ ապացուցել ենք՝ որքան քիչ է նախդրագործածութիւնը, այնքան պարզ ու հեշտ ընկալելի է գրուածքը. մի հանգամանք, որը նկատելի է նաեւ դարեր առաջ ստեղծուած Հայ ժողովրդական չափածոյ ստեղծագործութիւններում: Նախդրագործածութեան նման վիճակը հետեւանք է նաեւ միջին Հայերէնի իւրայատկութեան, որտեղ գործուն են յատկապէս գ եւ ի նախդիրները, իսկ հոլովներից նախդրակիր են յատկապէս հայցականը եւ տրականը:

Ասենք նաեւ, որ գրաբարագիր մեծ բանաստեղծի՝ միջին Հայերէնով շարադրուած հանելուկները («Առակք») գրուած են՝ չափուած ու ձեւուած, յաճախ՝ նոյնայանգ վերջաւորութեամբ: Զգացուած է ձգտում՝ գրել միջին գրական Հայերէնով, բայց կտրուկ չհեռանալ գրաբարի ընդունուած լեզուաքերականական ձեւերից: Օրինակ՝ բացառական հոլովը մշտապէս կազմուել է ի նախդիրով, անձնական դերանունները հայցական հոլովում հանդէս են գալիս գ նախդիրով եւ այլն:

Այժմ դիմենք այս ամէնն ապացուցող փաստերին:

Ա. Չ նախդիրի գործածութիւնները  
ա) Չ նախդիր+հայցական

Չ նախդիրը հայցական հոլովին ինչպէս միշտ հաղորդել է որոշեալութիւն՝ հիմնականում դրուելով ուղիղ խնդրի վրայ, որը երբեմն կրել է նաեւ և որոշիչ յօդ:

«Յորժամ ըզկովն քարշեցին» (110):  
«Սիրէ գմորթի եւ ատէ գբաճջար» (110):

«Եւ ա՛յլ գեղեցիկ զինք ցուցանէր» (111):

«Չիճօղան արար լեզու խառնակ» (111):

«Յընթրիս կոչէր զագգըս մարդկան» (115):

Քան զ յարադրութեամբ կազմուել են որակական ածականի համեմատութեան աստիճանը եւ համապատասխան բայի պահանջով նաեւ՝ ձեռի պարագայ:

«Մանուկ մի՛ կայր ի Հայք գովան, Քան ըզՍամփսոն ա՛յլ յաղթական» (116):

«Ըզջուրն հըրոյ նըման տեսայ, Նաեւ պայծառ քան զլուսընկայ» (112):

Յաջորդ տողում քան+հայցական կառույցով կազմուել է ձեռի պարագայ:

«Քան զծիրանի ծով կու ծըփայ, Շատոնց արիւն հեղեալ է նայ» (112):

Նոյնը նաեւ մէկ այլ տեղ՝ «Որսիկ առնէ քան ըզբազայ» (113):

Չես, զերդ եւ զինչ նախդրութիւնների հետ գործածել է գ+հայցական կառույցը՝ դրսեւորելով ինչպէս, աման, պէս, որպէս իմաստներ:

«Չորքոտանի է գետ ըզշուն, Ու ձու ածէ գետ ըզթրոշուն.

Խոտ նա ուտէ գետ զանասուն, Ունի մըզկիթ եւ ոսկրէ տուն» (113):

«Բարձր նըստի գետ զամիրայ» (114):

Կան տեղեր, ուր հայցականի վրայ գ նախդիր չի յաւելուել:

«Եւ ի շուրջ կու գար գետ փերեզակ» (112):

«Շընորհալից կայր աղիւսակ, Եւ ունէր հազար գառըն սպիտակ. Իրենց մաքիքն էր սեւորակ, Եւ իրեն հովիւն գետ հրեշտակ» (112):

«Ձերդ ըզքարագործ եւ ա՛յլ իմաստուն  
Հրաշից ծաղկանց շինէ իւր տուն»  
(114):

«Ձերդ զգա՛յլ ուտէ ինքըն խոչքոր»  
(118):

«Բոլորի՛ գինչ ըզկծիկ» (113):

«Աչեր ուներ՝ զերդ ըզկայծակ» (116):

Նշուած նախադասութիւնները, յա-  
ճախ արտայայտելով նոյն իմաստները,  
միջին հայերէնում ունեն նաեւ իմաստա-  
յին տարբերութիւններ, սակայն այդպիսի  
դրսեւորումներ չկան սոյն հանելուկնե-  
րում:

բ) Զ+բացառական

Զ նախդիրն ընդամէնը մէկ անգամ է  
կազմել պատմական բացառական «Հոլո-  
վը»՝ մասին, վերաբերեալ իմաստներով:

«Ես ի՞նչ կարդամ զիրմէնքեզ ճառ»  
(110):

Բ. Խ Ասխդիրի գործածութիւնները  
ա) Ի+տրական

Այս կապակցութեամբ կազմուել են  
ուղեորման եւ դադարման տեղի պարագա-  
ներ:

1) Ուղեորման տեղ

«Որ անծանօ՛թքն ի մնա գային»  
(111):

(Խօսքը պանդուկի մասին է):

2) Դադարման տեղ

Աւելի շատ է գործածուած դադար-  
ման տեղի պարագան:

«Եւ ամփոփեալ իբր ի տըկի» (111):

«Գործաւոր փոքր եւ հրաշալի,  
Զամէն շըրջի յանապատի» (114):

«Պանդուկ մի կայր վերայ երկրի  
Ի յանցաւոր ճանապարհի» (111):

«Ոսկի փողոց կայր ի վըզի» (116):

բ) Ի+հայցական

1) Ուղեորման տեղ

Այստեղ եւս ի նախդիրով սահմանա-  
փակ է կիրառուել ուղեւորման հայցակա-  
նը:

«Փութով երթայր յարեան տեղին»  
(110):

«Կարի տեսայ ես շատ կարուան,  
Որ կու իջնայր ի Խորասան» (114):

«Զետ զայլագգի ելնէ ի լեռ» (115):

2) Դադարման տեղ

Առանձնապէս շատ է գործածուած  
դադարման տեղը՝ իմաստային մասնակի  
տարբերութեամբ՝ մէջ, վրայ եւ խորքը ի-  
մաստներով:

«Յամէն շըրջի ինքն ի քարեր» (110):

«Գրած է ի գիրն աւետարեր» (115):

Ի գիրն տեղի պարագայից բացի կա-  
րող է մեկնաբանուել նաեւ որպէս սահ-  
մանափակման անուղղակի խնդիր:

«Մինն ի յանդուհըս տառապէր,  
Մինն ի յերեսըն թըքանէր» (115):

(Ի յերեսըն - նախդիր տրական):

«Զի յիւրեանց խաչն չկայ բեւեռ»  
(118):

«Տեսայ զիմ հոգւոյս հոգին,  
Որ մեռաւ եւ ի հող թաղեցաւ» (118):

3) Ի+հայցական կառոյցով կան մատն այլ  
գործածութիւններ՝

Յանգման

«Աւատայ որ չէ նա խիստ խեռ...  
Բնաւ չառնու յոտքն բեւեռ» (115):

Ուղղութեան

«Զաչս ի յերկինքս համբառնամ»  
(116):

Համապատասխանութեան

Ի+հայցական կառոյցով մնան ածա-  
կանի եւ մնան նախադրութեան կիրառ-  
մամբ պահանջուած է համապատասխա-

նութեան անուղղակի խնդիր:

«Թէպէտ մըման է ի փայտ չոր» (115):

«Մանուկ մի այլ ի յայս մման» (116):

Այսպիսի որոշ գործածութիւններում  
գեղջւում է ի նախդիրը, եթէ գոյականը  
դրուած է տրական հոլովով:

«Ըզջուրն հըրոյ մման տեսայ» (112):

«Նման ցողոյս յերկիր իջաւ» (118):

Միասնութեան

«Խառնեաց ի մա դեղ հիւանդի»  
(116):

Ժամանակի պարագայ

«Տեսի մանուկ մի, որ ծնանէր,  
Եւ ի նոյն օրըն մեռանէր» (111):

«Ի յելանելն է փըրփըրակ,  
Երբեմն լինի փոշետեսակ» (113):

Նպատակի

«Յընթրիս կոչէր զագգըս մարդկան»  
(115):

Ինչպէս ասուել է, բացառական հո-  
լովը մշտապէս կազմուել է ի նախդիրով:

Կան նաեւ ի նախդիրով կազմուած  
մի քանի բայական յարադրութիւններ, ո-  
րոնք ոճաւորում են խօսքը, իսկ տողա-  
վերջում լինելիս՝ նպաստում յանգաւոր-  
մանը:

«Եւ ի շուրջ կու գար» (112):

«Կանթեղքն ի կախ կան անջըլան»  
(112):

«Պարան յետեն ի քարշ կու գայ»  
(113):

Կան նաեւ անուանական յարադրու-  
թիւններ:

«Եւ բաց ի բաց էր իւր ագին» (116):

«Մէկ-մէկ ի շուրջ գան գուգ ի գուգ»  
(118):

Հետեւեալ յարադրութիւնները  
նպաստել են նաեւ յանգաւորմանը՝

«Զնա հողմըն մեծ քակեաց ի տակ,  
Զշինողսն արար լեզու խառնակ»  
(111):

«Զորեքժուի ինքն է կանգուն,  
Ով զնա չունի՝ գիտեմ չէտուն,  
Ըզմարդն առնէ անհոգ ի քուն,  
Ով գիտենայ՝ է իմաստուն» (112):

Այսպիսով՝ Ներսէս Շնորհալու հանե-  
լուկներում («Առակք») նախդրագործա-  
ծութեան ուսումնասիրութիւնից պարզ է  
դառնում, որ դրաբար դրաւոր խօսքին  
զուգընթաց իր լիակատար տեղն է հաս-  
տատել միջին գրական հայերէնը, որտեղ  
հիմնականում խաթարուել են գրաբա-  
րեան նախդրագործածութեան օրինաչա-  
փութիւնները: Անգամ չեն գործածուել  
առ, ընդ, ըստ, ց նախդիրները, զ նախդիրը  
դադարել է տրական, բացառական (բացի  
մէկ գործածութիւնից) եւ գործիական հո-  
լովների հետ կիրառուելուց: Հետեւաբար,  
նրանով պայմանաւորուած իմաստները  
դրսեւորուել են այլ միջոցներով, մասնա-  
ւորապէս՝ հոլովական վերջաւորութիւննե-  
րով: Զ նախդիրը հայցականին հաղորդել  
է որոշեալութիւն, կիրառուել է որոշ նա-  
խադրութիւնների հետ:

Ուշագրաւ փոփոխութիւններ է կրել  
նաեւ ի նախդիրի գործածութիւնը: Ճիշտ  
է, այն, ի տարբերութիւն զ նախդիրի, ա-  
ւելի գործուն է, դրուած է նաեւ տրական  
հոլովի հետ, շարունակուած է ձեւաւորել  
բացառական հոլովը, հիմնականում գոր-  
ծածուելով հայցական հոլովի հետ՝ ար-  
տայայտում է շարահիւսական մի քանի  
կազմութիւններ, սակայն բազմաթիւ շա-  
րահիւսական կառոյցներ այլեւս չեն  
դրսեւորուած:

Այն գործուն է նաեւ բայական  
յարադրութիւններ կազմելիս:

Ինչպէս նկատելի է, նախդրագործա-  
ծութեան էական շեղումներ չկան, սա-

կայն շարունակուել է ձայնաւորանա- խորդ դիրքում կրկնակ ի(յ) գրութեան ա- ւանդոյթը, որը սկզբնաւորուել էր վա- ղուց.

«Ի յեփողէն իւրմէ խոռած» (113):

«Մինն ի յանդունդոս տառապէր,

Մինն ի յերեսըն թըքանէր» (115):

«էր ի յազգէն Արշակունեաց» (116):

**2. ՆԱԽԴՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՖՐԻԿԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ (ԺԳ.-ԺԴ. դդ.)**

Նախդրագործածութիւնը, ինչպէս ա- սուեց, միանման, միատարր չէ ամբողջ միջին հայերէնում, որը սովորաբար ներ- կայացուում է երկու ենթաշրջաններով՝ ԺԲ.-ԺԴ. դդ. եւ ԺԵ.-ԺԶ. դդ.: Տարբերու- թիւնները պարզորոշ դրսեւորուում են, երբ համեմատուում ենք միջին հայերէնով գրուած երկու կարեւորագոյն գրական յուշարձաններում՝ Ֆրիկի (1230-1315) տաղերում<sup>13</sup> եւ Նահապետ Քուչակի հայ- րէններում<sup>14</sup> գրաբարի նախդիրների գոր- ծածոթիւնները:

Նախդրագործածութեամբ առաւել հարուստ է Ֆրիկի տաղերի լեզուն, քա- նի որ հեղինակը ապրած ժամանակով համեմատաբար աւելի մօտ է գրաբարեան շրջանին, քան նրանից երկու դար յետոյ ստեղծագործած Նահապետ Քուչակը<sup>15</sup>, ո- րի պատճառով էլ Ֆրիկի լեզուում առա- ւել շատ են գրաբարեան քերականական ձեւերը, յատկապէս՝ Աստուածաշնչից գրաբար մէջբերումները: Այստեղ կարե- ւորուում է նաեւ երկու էական հանգա- մանք. ա) 16-րդ դարում ոչ միայն վերջ- նականապէս կազմաւորուել էր գրական միջին հայերէնը, այլեւ այն սկսել էր ժո- ղովրդախօսակցական լեզուի ներթափան- ցումների հետեւանքով առաւել չափով ձեռք բերել աշխարհաբարին յարող լե- ղուական ատաղձ, այսինքն՝ Ֆրիկի տա-

ղերի միջին հայերէնեան լեզուն առաւել գրական է, քան Քուչակի հայրէնների ժողովրդախօսակցականին յարող լեզուն, որը, սակայն, բաւականին մշակուած է: Այստեղ էական կարեւորութիւն ունի եւ ասելիքը: Ֆրիկի տաղերի հիմնական թե- մաներից են «հայ ժողովրդի պատմական ճակատագիրը, Հայաստանի քաղաքական վիճակը»<sup>16</sup>, թաթարական լծի եւ սոցիալ- տնտեսական անարդարութիւնների քննա- դատութիւնը, բարոյախրատական հարցե- րը, մինչդեռ Քուչակը արծարծում է գե- րազանցապէս արհեստաւորութեանը, յատկապէս երիտասարդութեանը յուզող սիրային, պանդխտութեան եւ բարոյախ- րատական ոլորտներին վերաբերող խնդիրներ, որոնք ներկայացուում են ըն- դամէնը մի քանի տողեր ընդգրկող գրա- կան զգայացունց պատկերներով: Ինչպէս գրական թեմաներն են, այնպէս էլ դրանք պատկերող ոճական միջոցներն են: Ֆրիկը, օրինակ, գրաբարով քաղում է Աստուածաշնչից առանձին արտայայ- տութիւններ, տողեր, մինչդեռ այդպիսիք անյարիր են Քուչակի լեզուին: Օրինակ՝ լսէք զձայնն երանաւտ. «Եկայք առ իս որդիք լուսոյ» (37): Ֆրիկը ոչ միայն տեղ-տեղ նման մէջբերում է կատարում, այլեւ դի- մում է գրաբարին:

Եղուկ թէ յայն ձայնէն լսեմ, թէ «Երթայք յիմէն» եւ ի ձախ մնամ (21): Ա- սես. «Ողորմեա՛ իմձ, Տէր, մեղաւոր ծառայն քո եմ ես»:

Այնուամենայնիւ, երկու հեղինակ- ներն էլ ձգտել են հնարաւորինս պարզ ու շիտակ, առանց լեզուաոճական խճո- ղումների ներկայացնել իրենց ասելիքը: Պատահական չէ, որ Ֆրիկն ուղղակիօրէն գրել է. «Ֆրիկն հա՛նց պարզ է խօսել, որ ամենայն մարդ իմանայ» (էջ 30): Այստեղ «պարզ խօսել», կարծում ենք, նշանակում է գրել ժողովրդին հասկանալի լեզուով,

այն է՝ ոչ գրաբարով խճողուած եւ ոչ էլ միջին հայերէնեան խիստ տեղայնու- թեամբ յագեցած լեզուով: Նա գրել է գրական մակարդակի բարձրացուած այն- պիսի գրական միջին հայերէնով, ինչպէս գրուած են Ներսէս Շնորհալու հանելուկ- ները եւ այդ ժամանակաշրջանի տաղեր- գուների գործերը: Քանի որ մեզ այնքան էլ պարզ չէ ամբողջովին ժողովրդական- գեղջկական շրջանի խօսակցական լեզուի ինչպիսին լինելը, որը, անշուշտ, միա- տարր լինել չէր կարող, պէտք է ենթա- դրել, որ միջնադարում, յատկապէս ԺԲ.- ԺԴ. եւ հետագայ դարաշրջաններում, հրամայական պահանջ է եղել ստեղծել միջին հայերէնեան միասնական գրական լեզու, որն այդպէս էլ չկարողացաւ իր լեզուաքերականական մշակուածութեամբ ամբողջականանալ, ինչպիսին գրաբարն է: Գրաբարի հզօր շուկն էր ժողովրդա- խօսակցական տարաբնոյթ լեզուական ազդեցութիւններն այս գործընթացում ստացել են գերակայ բնոյթ, իսկ ԺԵ.-ԺԶ. դարերում արդէն որոշակի դեր է ունեցել նաեւ նոր զարգացող աշխարհաբարը:

Ֆրիկը, իհարկէ, տարբեր յաճախա- կանութեամբ է գործածել առ, ընդ, ըստ, գ, ի(յ) նախդիրները, բացառութեամբ ց նախ- դիրի, որը բացակայում է նաեւ Քուչակի հայրէններում:

**Ա. Առ նախդիր**

Ֆրիկի ստեղծագործութիւններից ա- ռանձնացրել ենք հայցական հոլովի հետ առ նախդիրի 25 յաճախականութեամբ գոր- ծածոթիւններ՝ խնդրային եւ պարագայա- կան մի քանի իմաստների դրսեւորմամբ. միւս հոլովների հետ առ նախդիրի գործա- ծոթեան չենք հանդիպել:

**Առ+հայցական**

**Խնդրային իմաստներ**

**1) Հաղորդման**

«Աղաղակենք յուսով առ նա բանք գովութեան» (42): «Առ Տէր միշտ խօսէր» (16): «Եւ ոչ անոյշ առ նա խօսի» (107):

**2) Յանգման**

«Երբ մեղօք առ մեզ դիմի նա» (44): «Չամէնն առ քեզ բերենք հիմայ» (89): «Աւանդեցեր առ հայր զոգիդ» (68):

**3) Վերաբերութեան**

«Արարիչն առ մարդիկ սէր ե՞րբ ցու- ցանէր» (16): «Այն մարդն որ երեղ<sup>17</sup> ունի, նա սի- րէ զԱստուած կենդանի,

Ըզլոյսն առ Տէր հաստատէ, չարու- թեան ինքն չի հետեւի» (96):

«Բարեխօս առ քեզ լինենայ» (42):

«Եւ բարեխօս առ Տէր ունիմ ըզսը- բուհի կոյս Մարիամ» (23):

«Բանք գովութեան առ Աստուած» (60):

Սոյն վերնագիրը նշանակում է գո- վասանք Աստծոյ վերաբերեալ կամ գովա- սանք՝ ուղղուած Աստծուն:

**4) Միասնութեան**

«Ով որ մարմնոյն իշխան լինի, խա- ղաղութիւն առ նա պիտի» (27):

«Բոլոր մարմինդ զինչ առ քեզ կայ, Ձինչ գործեցին յերկրի դոքա, Աստ տապակի եւ խիստ դողայ» (40):

**5) Սահմանափակման**

Ֆրիկի նշանաւոր «Գանգատ» բա- նաստեղծութիւնն սկսուում է այսպիսի տողերով.

«Աստուած արդար եւ յիրակի, եւ ողորմած յամենայնի Առ քեզ հանդէս գամ ի վիճի»:

Այսինքն՝ Քեզ հետ գալիս եմ վիճելու: Այստեղ «առ քեզ» (քեզ հետ, ոչ թէ քեզ մօտ) կը նշանակի. ե՛լ միասնութիւն, ե՛լ սահմանափակում, ե՛լ հաղորդում՝ նայած, թէ ինչպէս է մեկնաբանուում:

«Զինչ գործած մեղք կայր յաշխարհս, գամէն գտաւ ստեղծողն առ իս» (24):

Կարող է մեկնաբանուել նաեւ որպէս տեղի պարագայ:

«Ով որ մարմնոյն իշխան լինի, խաղաղութիւն առ նա պիտի» (27):

Պարագայական իմաստներ

1) Տեղի պարագայ

Դարձեալ միայն հայցական հոլովով են առ նախդիրով կազմուած ուղեւորման եւ դադարման տեղի պարագաները:

ա) Ուղեւորման տեղ

Նման պարագայ են պահանջել տեղափոխութիւն ցոյց տուող շարժման բայերը՝ առաքել, գնալ, երթալ, իջանել, տանել եւ այլն:

«Բոլորիցս Աստուածն, որ առ մեզ իջաւ» (17): «Դու ասացեր. «եկայք առ իս, զանանց դրախտն ձեզ կուտամ» (22): Տէր ողորմեա մեղաւորիս, թէ կամենաս՝ առ քեզ կու գամ» (23):

«Զնոյ ընտրեցեր մաքուր մենակ: Առաքեցեր առ նա գուարթուն» (63): «Զայս մեզ յիշատակ եթող եւ զնաց առ հայրն եւ հոգին» (80): (Առ նախդիրը վերաբերում է նաեւ հոգին բառին): Քաւել թէ (= միայն թէ - Գ. Մ.) երթանք առ կոյսն (85) եւ այլն:

բ) Դադարման տեղ

Աւելի շատ է առ+հայցական կառոյցով

ցով ուղեւորման տեղի, քան նոյն կառոյցով դադարման տեղի կիրառութիւնը: Առանձնացրել ենք ընդամէնը մի քանի օրինակ՝

«եկայք որդիք իմ Սիոնի, ձեր վարձն առ իս կայ ի շահի» (27):

«Աստուած օրհնէ զայն կարգացողն, որ իմ խրատս առ ինք մնաց» (32):

«Բոլոր մարմինդ զինչ առ քեզ կայ» (40):

«Հինգ զգայարանքս, որ առ մեզ կայ» (41):

«Է՛ խելք ու յիմացք չարի, որ յերակ առ իս կու կենաս» (84):

3) Նպատակի պարագայ

Գրաբարում առ ի+հայցական կառոյցը արտայայտում է պատճառի կամ նպատակի պարագայի իմաստ: Փրիկի գրքում հանդիպել ենք նման մի գործածութեան.

«Մարիամու տեսեալ զտեղին Առաւօտուն չոգան կանայք, Առ ի խընդրել ընդ գերեզմանն Տեսին ըզվէ՛մն թաւալակ» (69):

(Մարիամի տեսած տեղը առաւօտեան եկան կանայք՝ գերեզմանը զննելու նպատակով, տեսան վէ՛մը շրջուած): Զի բացառում, որ առ ի խընդրել նշանակում է նաեւ զննելիս, զննելու ժամանակ:

Բ. Զ նախդիր

Զ նախդիրը գրաբարում գործածուած է բացառութեամբ սեռականի, միւս թեք հոլովների հետ՝ տուեալ կապակցութեամբ արտայայտելով քերականական զանազան իմաստներ:

Յատկապէս Թ.-ԺԱ. դարերի գրաբար մատենագրութիւնում, բացառութեամբ Նարեկացու «Մատեան»-ի, յաճախակա՞նութեամբ աստիճանաբար սաստկացող ի

նախդիրի համեմատ նուազում է զ նախդիրի գործածութիւնը: Այս գործընթացն իր բարձրակէտին է հասնում յատկապէս ԺԴ.-ԺԶ. դդ. գրական միջին հայերէնում, քանի որ զ նախդիրը դրուում է միայն հայցական հոլովի հետ, եւ ակնառու է դառնում միջին հայերէնում «զ-ի՛ փաստօրէն միայն հայցականի նշան դառնալը»<sup>18</sup>: Առանձին դէպքերում զ նախդիրը փոխարինում է ի նախդիրով կամ հայցականը գործածուում է առանց այդ նախդիրի՝ բացառութեամբ այդ հոլովով դրուած անձնական, ցուցական եւ յաճախ էլ այլ դերանուններ:

Փրիկի տաղերում եւս զ նախդիրը հիմնականում գործածուել է հայցական հոլովի հետ՝ դրուելով գոյականների, դերանունների եւ գոյականաբար գործածուած այլ խօսքի մասերի վրայ, ուղիղ խնդրին հաղորդելով որոշեալութիւն: Այն սահմանափակ գործածուել է նաեւ բացառական հոլովի հետ, ինչպէս նաեւ՝ քան նախադրութեան գուգակցմամբ (քան+զ+հայցական) նկարագրական եղանակով կազմելով որականական ածականի բաղդատական աստիճանը:

Կան շեղումներ:

Փրիկի տաղերում զ նախդիրի գործածութիւնն առաւել պարզորոշ ցուցադրելու համար առանձնացրել ենք հետեւեալ խմբերը՝

ա) Զ նախդիրի սովորական, կանոնաւոր կիրառութիւն

Հայցական հոլովի հետ հիմնականում զ նախդիրը գործածուել է ըստ յայտնի կանոնի. այն դրուել է հայցական հոլովի վրայ՝ որոշեալութեան նկատառումով, նախադաս լրացման դէպքում աւելացուել է նրա վրայ:

«...զայլոց իրք այլ առի գերիս» (24):

«Է՞ Փրիկ, ըզմիտքդ ժողովէ» (25):

«Ով զիմ ողբանքս լսենայ» (32):

(Յոգնակի հայցականը չի ստանում ս հոլովակերտ մասնիկ, քանի որ այն նոյնութեամբ համընկնում է յոգնակի ուղղականին):

«Որ ո՛չ գիտեն զհայր եւ զորդի» (101):

«Զանգէտ ու զնաքաս մարդն յատընտրս առնես ձեռնաւոր» (49):

«Զերկինք ու զերկիր եւ ըզծով կու պատես դուն յօր մի բոլոր» (50):

բ) Ինչպէս նշուեց, յատկապէս անձնական եւ ցուցական, երբեմն էլ այլ դերանունների հայցականը մշտապէս կրում է զ նախդիր: Օրինակ՝ զայն, զայս, զմեզ, զիս, զքեզ, զոք եւ այլն:

«Զեմ կացել ի պատուիրան, քըսել, զըբկել եմ զայլք ու զիս» (24):

Շատ հազուադէպ յետադաս ցուցական դերանուն հայցականի զ նախդիրը կրկնուում է նախադաս լրացման վրայ, սակայն առանց համապատասխան յօդի յաւելման:

Եւ զօրն զայս խնդրեմ լալով (21) (փիս. զօրս զայս):

գ) Եթէ որոշիչը կամ յատկացուցիչն այլ լրացումով հեռանում է բուն լրացեալից, զ նախդիրը կարող է կրկնուել: Օրինակ՝

«Զիմաստուն մարդկանց զհացն կու ձգես ի սար կամ ի ձոր» (49):

«Եւ ըզդորդ մարդկանց զտունն կու քակես առանց բահաւոր» (48):

Զ նախդիրը կարող է եւ չկրկնուել:

«Եւ զքո անչափ մեղքն քաւել» (59):

«Հաւսար ամէնքս զտէրն աղաչենք, որ զմեր հոգոյ աչքն բանայ» (31):

դ) Զ նախդիրի կրկնութիւն է լինում անկախ նշուած կանոնից:

Ձինչ որ խանորայք կային՝ յափն ունէր զինչ զմի խընձոր (49):

Ե) Ձ նախդիրից բացի կարող է դրուել ն որոշիչ յօդը, կամ առանց գ-ի աւելացուել միայն ն յօդը, իհարկէ, գործածելի է նաեւ անորոշ ձեւով:

«Վասն սիրոյ զհայր եւ մայր թողոյր եւ ելանէր» (18):

«Շատ մեղք ու չարիք ունիս՝ զամէնըն մէկ-մէկ դու գիտես» (54):

«Չուտելն ու խըմելն ատէ, աղօթից ի գատ մի կենալ» (47):

«Երնեկ ես նորա կուտամ, որ կարէ ընկեր սիրենալ» (47):

զ) Դրուել է բացայայտելի եւ բացայայտչի վրայ:

«Յիշեա՛ եւ զիս ըզմեղատրս» (72):

է) Գրաբարի բոլոր շրջաններում գործածուել է գ նախդիրով կազմուած փոխանուն սեռականը: Այստեղ մեզ հետաքրքրում է գ+յատկացուցիչ+յատկացեալ կառոյցով, որոշեալ յատկացեալի զեղչմամբ յատկացուցիչի՝ փոխանուն սեռականի վերածման փաստը, ըստ որում, փոխանուն սեռականի վերածուած յատկացուցիչն իր վրայ է կրում ոչ միայն յատկացեալի գ նախդիրը, այլեւ ստանում է յօդ:

Ձ նախդիրով փոխանուն սեռականի ութ գործածութիւններ կան Գրիգոր Նարեկացու «Մատեան»-ում (էջ՝ 49, 53, 150, 154, 179, 181, 203, 220), սակայն միշտ գ նախդիր կրող փոխանուն սեռականը վերցրել է ն որոշիչ յօդ, որը եւ յուշում է յատկացեալի զեղչման փաստը: Օրինակ՝

«Ձիա՞րդ փշովք մեղաց հեղձեալս զանարատին

պարծեցայց» («Մատեան», էջ 150):  
Ձեղչուած է գ...իսուս գոյական յատ-

կացեալը:

Փոխանուն սեռականի մի քանի դրսեւորումներ կան Յրիկի տաղերում:

«է՛ անօրէն եւ անառակ երիտասարդ լըսէ զիմս դու» (33):

(Փխ. զիմ խրատն, խօսքն/իսուս):

«Վասն երիտասարդի շնութեան եւ արբեցողաց» ոտանաւորի տողերն աւարտուում են միեւնոյն ոչ վերջաւորութեամբ (Աստուծոյ // ամենոյ // մարդոյ // ցանկալոյ եւ այլն):

Իսկ չորս տեղ գ նախդիրը գործածուել է փոխանուն սեռականի հետ: Յայտնի է, որ զինչ եւ քան նախադրութիւնները դրուում են հայցական հոլովով խնդրի հետ, իսկ այս օրինակներում նրանց յաջորդում է գ նախդրակիր փոխանուն սեռականը, որը, սակայն, վերջից որեւէ յօդ չի ստացել:

Ձինչ նախդիրը գործածուում է ինչպէս, նման, իբրեւ, պէս նշանակութեամբ, որպիսին կիրառուել է Յրիկի վերը նշուած ոտանաւորի այլ տողերում. այն նոյնպիսի իմաստ է դրսեւորում նաեւ նշուած փոխանուն սեռականների հետ, որոնք արդէն կարելի է համարել հայցական հոլով:

«Ձլեզուդ մխել ես չար ու սուր, չեմ ձանձրանալ յիշոց տալոյ, Սիրտդ լըցած է նենգութեամբ՝ զերդ գազանի, զինչ զգայոյ» (34):

«Ստամոքդ արձակ ես դու զուգել՝ զինչ ըզձիու կամ ըզջորոյ» (35):

«Մորուօքդ մարդ ես կատարեալ, խելքդ պակաս քան զերեխոյ» (35):

«Պապանձի ճարտար քո լեզուդ՝ գլխակորիս զինչ զգայոյ» (36):

Սրանք, թւում է, յանուն յանգաւորման ստեղծուած արհեստական ձեւեր են,

սակայն զգացուում է նաեւ յատկացեալի զեղչուած լինելը:

Օրինակ՝ խելքդ պակաս քան զերեխոյ, այսինքն՝ զերեխոյ խելք:

Ստամոքդ արձակ ես դու զուգել՝ զինչ ըզձիու կամ ըզջորոյ, այսինքն՝ զձիու կամ զջորոյ ստամոք:

Յրիկը բացառական հոլովը հիմնականում կազմել է ի (ի, յ, ի+յ) նախդիրի միջոցով, այն հազուադէպ է կազմուում առանց ի նախդիրի:

Կան նաեւ պատմական բացառականի սահմանափակ օրինակներ:

«Երրորդութեանն երկրպագեմ եւ ըզմմանէ միշտ գոհանամ» (22): «Մեք գոհանամք զողորմածէն» (32):

Քան նախադրութիւնը գրաբարում գ+հայցական կառոյցով դրուած համեմատելի բառի հետ դրսեւորում է որակական ածականի համեմատական աստիճանը՝ նկարագրական եղանակով: Նոյն գործառոյթը կատարուում է եւ միջին հայերէնում: Օրինակ՝

«Նա՛ չըկայր աղէկ եւ մեծ քան ըզւեր» (Յրիկ, 19):

«Քան զկաթն զիստակ էի» (Յովհ. Երզնկացի, 159):

«Քան զւերն այլ քաղցրիկ պտուղ ի աշխարհս

չաւտամ թէ լինի» (Քուչակ, 39):

Քան նախադրութիւնը դարձեալ գ+հայցական կառոյցի հետ կարող է դրսեւորել պէս, նման, որպէս, ինչպէս իմաստներ՝ կազմելով ձեւի պարագայ:

«Ես յայն յահէն քան զուր դողամ» (Յրիկ, 20):

«Քան զջորո ճապաղեցայ» (Յովհ. Երզնկացի, 216):

«Քան զուր ես ի վեր վազեր, քան

զկարմիր

խնձոր բոլորեր» (Քուչակ, 76):

Որակական ածականի համեմատութեան աստիճանը կազմելու համար պէտք է առկայ լինի այդ ածականը, իսկ եթէ այդպիսին չկայ եւ չի էլ ենթադրուում, ուրեմն սոյն կառոյցով կազմուել է ձեւի պարագայ: Կայ նաեւ այսպիսի մի ուշագրաւ դիտողութիւն, ըստ որի քան եւ քանց (քան+ց, նաեւ՝ քան+ձ) նախադրութիւնները կարող են եւ տարբերակուել, քանի որ քանց (քանձ) բառը կարող է գործածուել ե՛ւ որպէս շաղկապ, ե՛ւ որպէս նախադրութիւն<sup>19</sup>:

Քան նախադրութեան հետ հայցականով դրուում է գ նախդիր, բայց ինչպէս երեւում է, քանց բառի ղէպքում դա պարտադիր չէ:

«Մեռնիլն ինձի շատ լաւ էր, քանց ի այս հալս կենայի» (Քուչակ, 257):

«Պագ տան ու պագ առնուն քանց հարիւր տարին կարեւոր» (40):

«Քանց սէրն քաղցրիկ չկայ» (54):

Յրիկի տաղերում եւս քան+գ+հայցական կառոյցը կարող է դիրքով մօտ կամ հեռու լինել որակական ածականից: Օրինակ՝

«Ողջոյն երես նա Սիմոնի՝ Ահեղակերպ քան զփայլակ» (70):

«Քան զերկաթն այլ ի՞նչ ամուր» (86):

Ձ նախդիրը բացառական հոլովի հետ կազմել է պատմական բացառական՝ վերաբերական իմաստով՝

«Երրորդութեանն երկրպագեմ եւ ըզմմանէ միշտ գոհանամ» (22):

Գ. Ընդ նախդիր

Կան սեռական, տրական եւ հայցական հոլովների հետ ընդ նախդիրի մի քանի գործածութիւններ, մօտաւոր հաշուով՝

ընդ+սեռական՝ մէկ, ընդ+տրական, ընդ+հայ-  
ցական՝ հինգական, բայական յարադրութիւն՝  
մէկ յաճախականութեամբ, ընդամէնը՝ 12 գոր-  
ծածութիւն:

ա) Ընդ+սեռական

Փոխարինութեան անուղղակի խնդիր

«Զքեզ ընդ որթոյ փոխարկեցին» (64):

բ) Ընդ+տրական

1) Միասնութեան անուղղակի խնդիր

«Օրհնել, գովել, փառաւորել զհայր  
եւ

զՈրդին ընդ Սուրբ Հոգոյ» (33):

«Տո՛ւր համբերել սրտի կամօք ընդ քո  
սրբոց եւ սիրելեաց» (ՖԴ., 317):

«Յորժամ յարութիւն լինի, ընդ  
սրբոցն փառաւորես» (55):

«... պիղծ եւ խառնակ, ընդ դստե-  
րացն Կայէնի» (63):

2) Հաղորդման

«Քանզատ բանք վիճման ընդ ամե-  
նագօրին Աստուծոյ» (100):

(Քանզատ՝ վիճման խօսք ամենագօր  
Աստուծու հետ):

գ) Ընդ+հայցական

1) Միասնութեան

«Անանց թագաւորութեան նա հա-  
սաւ ընդ սուրբս ամենայն» (98):

Խաչակցեցար ընդ աւագակ (68):

2) Վերաբերութեան

«Դարձեալ կու ասէ Ֆալաքն ընդ աղ-  
քատ եւ ընդ թագաւոր» (50):

3) Հաղորդման

«Եւ սիրով ընդ Աստուած նա՛ միշտ  
զրուցէր» (18):

4) Սահմանափակում

«Միջնորդ, ընդ մարդ եւ ընդ Աստուած,  
մայր Աստուծոյ զինքն հաւատամ»  
(23):

5) Ձեռի պարագայ

«Արդ բերանիդ շըրթունքդ որ կայ,  
Յերակ ընդ ցոփ շարժին դոքա» (39):

Նաեւ կարելի է կարծել, որ ընդ ցոփ  
շարժին բայական յարադրութիւն է:

Այսպիսով, Ֆրիկն ընդ նախդիրը  
գործածել է կանոնաւորապէս, առանց շե-  
ղումների: Սակայն բացառական եւ գոր-  
ծիական հոլովների հետ գործածութիւն-  
ներ չկան, իսկ տրական եւ հայցական  
հոլովներով կիրառութիւնները սահմանա-  
փակ են:

Դ. Ըստ նախդիր

Ըստ նախդիրը Ֆրիկի ստեղծագոր-  
ծութիւններում ունի սահմանափակ գոր-  
ծածութիւն, որի հետեւանքով էլ առանձ-  
նացրել ենք ընդամէնը 3 օրինակ:

ա) Ըստ+տրական

1) Համապատասխանութեան անուղղա-  
կի խնդիր

«Աստուած, մի՛ առնէր ինձ ըստ շատ  
չար մեղացն,

որ է իմ գործած» (53):

2) Հիմունքի պարագայ

«Կամ քո սրտիդ եմք ատելի,  
Որ չարչարանք ըստ հրամանի» (103):

3) Ցոյց է տալիս յաջորդականութիւն

«Օր ըստ օրէ նա զարգանայր» (66):

Այսպիսով՝ խիստ սահմանափակուել  
է ըստ նախդիրի գործածութիւնը ե՛լ հո-  
լովների հետ կիրառման, ե՛լ շարահիւսա-  
կան իմաստների դրսեւորման առումով:

Ե. Ի նախդիր

Առաւել յաճախական է ի նախդիրի  
գործածութիւնը, որը, սակայն, դրուել է  
միայն տրական եւ հայցական հոլովների  
հետ, նաեւ կազմել է բացառական հոլո-  
վը: Կան այս նախդիրով կազմուած

յարադրութիւններ, ինչպէս նաեւ յաջորդ  
բառի հետ կպաստել է բանաստեղծական  
տողերի յանգաւորմանը: Կան զգալի  
թուով շեղումներ:

Ըստ հոլովների առկայ են իմաստա-  
յին մի քանի դրսեւորումներ:

ա) Ի+տրական հոլով

1) Փոխարինութեան անուղղակի խնդիր  
«Ի մանկութեան խեղ կատակին հիմիկ  
մէկ մէկ համար կու տամ» (ՖԴ., 253):

2) Յանգաման

«Վասն այն դիպաւ ոտքս ի քարի, որ  
աւելի ջանք չի դրի» (25):

3) Նպատակի պարագայ

«Զայս փողս տանք՝ ոսկի առնունք  
եւ Աստուծոյ

տանք ի շահու» (37):

«... ձեր վարձն առ իս կայ ի շահի»  
(27):

4) Ուղեւորման եւ դադարման տեղի պա-  
րագաներ

«Աստուած ողորմած լինի ու հանէ  
զնաւն ի ցամաքի:

Գեմ մէկ Աղամ էր ի դրախտի» (100):

«Ո՞վ իշխէ ասել զԱստուած, թէ պա-  
տած էր ի խանձարորին,

Այսինքն միայն Աստուած, որ ասաց  
զէլի է՛լն ի խաչին» (79):

«Ետուր բղխումն ինձ արտասուաց,  
որ ի հրոյն անմահ մնամ» (23):

«Զինչ արեւու շողն ի շրինի մէջ հո-  
գոյս կու թռուռայ» (33):

5) Տեղի պարագաներ՝ ի նախդիրով եւ  
ի մէջ նախադրութեամբ:

«Զի թէ թագաւոր է ի թախտի»  
(=վրայ) (106):

«Կամ քահանայ է ի բեմի» (=վրայ)  
(106):

«Երբ աղաչանք Տէրն ընդունի,  
Փառք ի բարձունս-վերանայ» (31):

բ) Ի+հայցական հոլով

ԽՆԴԻՐՆԵՐ

Ի+հայցական կառուցով դրսեւորուել  
են որոշ խնդրային եւ յատկապէս՝ պարա-  
գայական իմաստներ:

1) Ուղղութեան

«Նստէր ի քրովբէս յանդունդ նայ  
հայէր» (17):

«Հայիս ի յաջ կոյս եւ ի ձախ» (36):

«Յաջ եւ յահակ էր նա՛ հայել»  
(58):

«... Հանց որ վստահ ի Տէր հայի»  
(26):

«Յիս նայելով՝ ձե՛զ խղճացէք» (22):

«Երբ ի տարողն կու նայիմ, կու կար-  
կամիմ եւ մնջանամ» (21):

«Աչօք նայիր ի կին օտար» (33):

«Եւ քաղցր աչօք յիս նայի» (44):

«Վաղն երբ քու յեղբայր նայիս»  
(91):

2) Յանգաման

«Քեզ հնազանդ պիտէր կենալ՝ յոտք  
անկանիլ ամէն մարդոյ» (33):

Բառացի նշանակում է՝ ամէն մար-  
դու ոտքերն ընկնելով, այսինքն՝ խոնարհ  
լինել, խոնարհուել:

«Քաւել թէ երթանք առ կոյսն,  
միածնին ի յոտքն անկանինք» (85):

«Կպչեն յամէն դիմաց ի նա» (38):

«Զանացի թէ ի լոյս ելնեմ՝ ի խաւա-  
րըն խիստ մօտեցայ» (43):

«Հանապազ դիմեմք ի նա» (53):

«Յաստուածածինն էր նա դիմել»  
(158):

«Կամ ինչպէ՞ս դիպնու ի մարդն»  
(94):

Ֆրիկի «Խրատ ոգեշահ եւ պիտանի» բանաստեղծութիւնն սկսւում է հետեւեալ կերպ՝

- Ի՛մ սիրտ, վատին մի՛ լսիր ու չարին իսկի տեղ մի՛ տալ,

Այս աստուծորիս վերայ՝ վատն իսկի չի մնալ:

Այն մարդն, որ ինքն վատ առնէ՝ հանդիպի ինքն վատի մի այլ,

Եւ զինչ որ ունի ամալ՝ գայ ի յոտքն փաթօթի նա՛ այլ (47):

Այս քառատողը, որպէս հայրէն, գրեթէ բառացի կայ տպագրուած նաեւ Յովհաննէս Երզնկացու (ԺԳ. դ.) եւ Նահապետ Քուչակի (ԺԶ. դ.) հայրէնների շարքում<sup>20</sup>:

Այս քառատողը ձուլուած է Ֆրիկի նշուած ամբողջական ստեղծագործութեանը, որի բոլոր տողերն աւարտուում են ալ նաեւ այլ յանգաւորմամբ, իսկ միւս երկու հեղինակների գրքերում այդ քառատողի առաջին երկու տողերն ունեն արյանգաւորում եւ այլն: Այստեղ ուզում ենք նշել, որ Յովհաննէս Երզնկացու եւ Քուչակի որոշ հայրէններ բառացիորէն նոյնանում են: Օրինակ՝

Երզնկացի, էջ 31 և ԼԲ, Քուչակ, էջ 293, և 83:

Երզնկացի, էջ 39 և ԿԲ, Քուչակ, էջ 294, և 86:

Երզնկացի, էջ 26 և Ը, Քուչակ, էջ 266, և 30 եւ այլն: Պէտք է ճշգրտուի դրանց հեղինակի հարցը:

3) Սահմանափակման  
«Թէ չը կայր սէրն հոգւոյն ի սուրբ Ստեփաննոս» (18):

«Չասես, թէ դու մարդ ծնար, յերաւի ի յէջ նմանէս» (53):

«Մի՞թէ ի յայդ ես յուսացել» (59):  
(սահմանափակում եւ յանգում):

«Դու ապա ի մարդ նմանիս» (54):

«Պաք եւ ի աղօթք խիստ կու կենար» (93) (պաք = պահք):

4) Փոխարինութեան  
Ալիքս ի դեղին դարձեր (43):

«Դարձո՛՛ գչարութիւնս յիսնէ եւ փոխէ զինչ հին կայ՝ ի նոր» (50):

5) Միջոցի  
Ի+հայցական կառոյցը արտայայտել է գործիական հոլովի իմաստ:

«Եւ իջուցին զՏէրն ի խաչէն

Եւ պատեցին ի պատառակ» (69)  
(պատառակ = փոքր լաթի կտոր):

ՊԱՐԱԳԱՆԵՐ

ա) Շատ են ի+հայցական կառոյցով ուղեւորման եւ յատկապէս՝ դադարման տեղի պարագաները:

1) Ուղեւորման տեղի պարագայ  
Այն կազմուել է գրաբարում գործող կանոնների համաձայն:

«Նա կառօք հրեղէն յօղն ո՞նց ելանէր» (18):

«Թողնու գաշխարհիս պատրանս ու ելնէ ի լեւոն սիրու» (46):

«Ձաղեկն ի յերկիր ի վար վտարես» (48):

«Թուչունք հաներ ի ջրէն ի դուրս» (62):

«Տարար յերկիրն Քանանու» (64):

«Դու բարձրացար ի Գողգոթայ» (68):

«Տանեմ զքեզ ի յիմ դարպասն» (43):

«Առին տարան յեզր ի հողին» (43):

2) Դադարման տեղ

Այսպիսի պարագայ են վերցնում դադարման տարբեր բայեր՝ բնակել, գրել, գրուել, դնել, ելանել, ընկնել, թաղել, թաւալտել, խնդալ, կալ (կամ), կենալ, հանել, վաթել եւ այլն:

Դադարման տեղը կարող է դրսեւորուել տարբերով իմաստով՝ որպէս նախդրիւ տրական՝ վրայ, մէջ նշանակութեամբ:

«... ես ի հրոյ ծով կու ծփամ,  
... թող թէ ի սուգ կամ ու կենամ» (22):

«Եւ զօրն զայս խնդրեմ, լալով, որ ի գեհեան չի մնամ» (22):

«Ի սիրոյն Աղամայ ի խաչ ելաներ (17), (= վրայ):

Կու դնես ի յոսկի այթոռ» (49):

«... ես ի հրոյ ծով կծփամ,  
... թող թէ ի սուգ կամ ու կենամ» (22):

Ես տեսայ՝ երազ էր ի քուն (95):

Երթաս թաւալտիս յաղբիսն (53):

Աստուած գայ յինքն բնակի (96):

Ֆրիկի ստեղծագործութիւններում ի նախդիրով եզակի տրական եւ հայցական հոլովներով ներգոյական հոլովի իմաստի դրսեւորման գրաբարեան կանոնը չի պահպանուում, քանի որ համապատասխան հոլովման պատկանելութիւնը նշանակութիւն չունի, իսկ յոգնակի թուում գրուում է յոգնակի հայցականի վրայ, սակայն ձեւաբանորէն յոգնակի ուղղականը եւ յոգնակի հայցականն այլեւս չեն տարբերուում, քանի որ հայցականը յաճախ ստանում է թոգնակիակերտ, ոչ թէ ս հոլովակերտ մասնիկ: Կան նաեւ տարբերակուած օրինակներ:

3) Նպատակի պարագայ  
«Յիմարս ոչ պատրաստեցի իւղ ինձ ի պիտան» (98):

(=պէտքերի, կարիքի համար):

«Ձի առանց հացի սեղանն անօգուտ է ի բազմական» (98):

(=անօգուտ է բազմածնների համար):

4) Ժամանակի պարագայ

«ՁՅովասափն սիրով ի յոյս մեծարէր» (18):

«Ո՛չ հրեշտակ ի գալ քո խնդայ» (43):

Կայ այսպիսի մի տող՝ «Կու դողամ զինչ ուուն ի քամուն»: Վերջինը կարող է ունենալ ե՛ւ քամուց, ե՛ւ քամի եղած ժամանակ իմաստը:

«Փառք Աստուծոյ մարդասիրին եւ յամենայն ժամ գոհանամ» (23):

«Ի սերմանելոյ ժամն կու լինի» (52):

«Մէկն ո՛չ ի տասն հասնի՛

Երկու երեք ամսոց մեռնի» (104):

Այստեղ ժամանակ արտայայտող բառը՝ լրացեալը, զեղչուած է՝ ի տասն ամ, ամս (ըստ Ֆրիկի՝ ուղղականաձեւ հայցական՝ ամք) կամ՝ ամի, ամաց: «Ողբանք զղջման ի հոգի» տաղում այյանգ ստեղծելու համար տողավերջում գրել է՝ մօտեցայ // ի կորայ // ի սեւացայ, լինենայ // ի (քեզ) նայենայ (43):

Այստեղ կարեւորում է մի հանգամանք եւս: Ինչպէս Ֆրիկի տաղերում, այնպէս էլ Քուչակի հայրէններում բանաստեղծական որոշ տողեր աւարտուում են ա եւ այ յանգերով: Օրինակ՝ զընա՛ // դատեցայ, նա // ծառայ (44), որից կարելի է եզրակացնել, որ միջին հայերէնում արդէն բառավերջում ա, ո ձայնաւորներից յետոյ գրուող յ ձայնորդը պատմական հնչիւնափոխութեան հետեւանքով այլեւս չէր արտասանուում:

\* \* \*

Կան ի նախդիրի գործածութեան շեղումներ: Շատ են ի նախդիրի կրկնակ գործածութիւնները, մանաւանդ ձայնաւորով սկսուող բառից առաջ դրուում է ի եւ նրա ձայնաւորանախորդ դիրքի յ ձայնորդը:

Այս երեւոյթը, ըստ մեզ հասած որոշ

ձեռագրերի, ինչ-որ չափով կար անգամ դասական եւ ետդասական որոշ հեղինակների գործերում, այնուհետեւ յաճախականում է 9-11-րդ դարերի գրաբարով գրուած երկերում, իսկ միջին հայերէնում ստանում է լայն տարածում:

«Բարի գործք իսկի չունիմ, որ գթացել էր Տէրն ի յիս» (24):

«Ի յառաջ զայս չիմանամ» (21):

«Առնուս պարգեւք ի յԱստուծոյ» (28):

«Որ ի յերկնից ի յերկիր խոնարհի» (45):

«Ես յայն յահէն քան զուռ դողամ» (20):

Նկատելի է, որ Ֆրիկը յաճախ յոգնակի հայցականը գործածում է ուղղականաձեւ ի կամ զնախդիրների յաւելմամբ: Օրինակ՝

«Աստուած ի ձեր գործքն հանգչի» (23):

«Է՞ Ֆրիկ, ըզմիտքդ ժողովէ» (25):

Որոշ տեղերում ի նախդիրը գործածուած է ոչ միօրինակ: Այդպէս է, օրինակ, «Ոտանաւորք եւ հայերէն բաներս հոգէշահ» բանաստեղծութեան տարբեր հատուածներում:

«Մինչ ածէ զմահն ու մօտ է եւ անողորմ գրօղն գայ,

Ո՛չ ի ծեր կու խնայէ, ո՛չ ի մանուկ եւ ո՛չ յերեխայ» (28):

Խնայել բայը գթայ, ներել, պահել եւ այլ իմաստներով գրաբարում պահանջել է ի+հայցական կառոյց (ՆՀԲ, I, 951): Այդպէս է եւ Ֆրիկի նշուած տողերում: Սակայն սոյն բանաստեղծութեան մէկ այլ հատուածում միշտ էլ, որ դրուել է ի նախդիրը:

«Յորժամ որ մահն մօտենայ մարդոյն որ գայ,

Ոչ ի ծեր կու խնայէ, ոչ տղայ եւ ոչ երեխայ» (28):

Իսկ մի քանի տող յետոյ, ընդհակառակը, դրուած է ի նախդիր.

«Ո՛չ յերբայր եւ ոչ ի քոյր կու խնայէ՛ առնու գնայ» (28):

Կան ի նախդիրով կազմուած բազմաթիւ յարադրութիւններ, որոնք կը ներկայացուեն ամբողջ շարադրանքի վերջում:

**3. ՆԱԽԳՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԽԱՉԱՏՈՒՐ ԿԵՉԱՌԵՑՈՒ (ԺԳ.-ԺԴ. դդ.) ՏԱՂԵՐՈՒՄ<sup>21</sup>**

Ըստ Մ. Աբեղեանի<sup>22</sup>, Խաչատուր Կեչառեցին գրել է ե՛ւ գրաբարով (բարառնութիւններ), ե՛ւ խօսակցական լեզուով՝ միջին հայերէնով (կաֆաներ): Աբեղեանը բացատրել է նաեւ բարառնութիւնը. «Նա յաճախ յօրինում է բարառնութեամբ (պրոսոպոպոյիա), այսինքն կամ խօսքն ուղղելով անխօս կամ վախճանուած հերոսներին, կամ նրանց բերանից խօսելով»:

Կեչառեցու լեզուում գրաբարեան բառերն ու քերականական ձեւերը, աստուածաշնչեան ուղղակի մէջբերումները եւ, առհասարակ, գրաբարեան լեզուաոճական ազդեցութիւններն առանձնապէս աչքի չեն զարնում: Նրա տաղերի լեզուն համեմատաբար աւելի է մաքրուած ու գրականացուած, քան Ֆրիկինն է:

«Խաչատուր Կեչառեցի» գրքի աշխատասիրողը՝ միջնադարեան բնագրերի հմուտ ուսումնասիրող եւ գրականագիտական նուրբ մտածողութեամբ օժտուած Մայիս Աւդալբէգեանը, իրաւացիօրէն գրել է. «Կեչառեցու կիրառած միջին հայերէնը Ֆրիկի հայերէնը է: Այն անհամեմատ գերծ է նեղ բարբառային բառապաշարի օգտագործումից»: ... «Սակայն, գրաբարեան բառերի օգտագործմամբ Կե-

չառեցու բանաստեղծութիւնները չեն դառնում գրաբար: Նրանք գրուած են ժողովրդական մտածողութեամբ...»:

Նախդրագործածութեան առումով պէտք է ասել, որ Կեչառեցու տաղերում շատ են գործածուած ի եւ զնախդիրները. ի նախդիրը դրուել է տրական եւ յատկապէս՝ հայցական հոլովների վրայ, ձեւաւորել է բացառական հոլովը եւ կազմել զանազան յարադրութիւններ: Առանց ի նախդիրի չի կազմուել բացառական հոլովը, զնախդիրը որոշեալ առման իմաստով գործածուել է հայցական հոլովի հետ:

Երբեմն, ինչպէս իր «Ողբ Խաչատուր Կեչառեցոյն վասն իշխանաց» գրուածքում է, մի քանի տողեր սկսում է զնախդիրով, որը ոճական կիրառութեան երանգ է հաղորդում.

«Ջերկիրս արեամբ, մեղաւք ներկեցաք...»

Ջեկեղեցեաց դրուելս փակեցաք...

Ջաւազանին խորհուրդն ուրացաք...

Ջխաչն եւ զհաղորդըն զայրացուցաք,

Ջեկեղեցին սուրբ քամահեցաք»:

Խիստ սահմանափակ քանակով կիրառուել են առ, ընդ նախդիրները, իսկ ըստ եւ ց նախդիրները նրա չափածոյում բացակայում են:

Ա. Առ նախդիր  
Առանձնացրել ենք 4 գործածութիւն՝

ա) «Գիր գրել առ Ալեքսանդրին» (177):

(Տրականով՝ յանգում եւ ուղղութիւն):

բ) «Առ իս կատարեա՛ զհրամանդ» (140):

գ) «Ջաշխարհս բարեխօս ունիմ Առ ծնեալ Աստուածո՞ր ի կուսէն» (143):

(Հայցականով՝ վերաբերութիւն):  
դ) «Եւ եկեալ առ ի միտս իւրեանց իմացան ըզլիքլ առիւծին» (185):

Այստեղ՝ եկեալ «առ ի միտս» յարադրութիւն է, որը, ըստ երեւոյթին, նշանակում է՝ գլխի ընկնելով, հասկանալով, հասու լինելով:

Բ. Ընդ նախդիր  
Առանձնացրել ենք ընդ նախդիրի 4 գործածութիւն՝

ա) «Սիրտն ճմլեցաւ կուսին ընդ իւր միածնին» (164):

(Տրականով՝ վերաբերութիւն):

բ) «Ղեկօք հաւատոյ անցիր ընդ ծիման ծովոյս հոսական» (148):

(Ընդ+տրական՝ տեղափոխում):

գ) «Եկին ընդ իս հանց ասին» (161):

(Հայցականով՝ յանգում):

դ) «Կըծկեալ պըշուցեալ հային Ընդ յերեսըն Աղէքսանդրին» (184),

(Ընդ+յ+հայցական՝ ուղղութիւն):

Գ. Ի նախդիր  
Առանձնապէս ակտիւ է ի նախդիրը, որը տրական եւ հայցական հոլովների հետ դրսեւորել է խնդրային եւ յատկապէս՝ պարագայական մի քանի իմաստներ:

Հիմնականում ի+տրական կառոյցով կազմուել է տեղի պարագայ՝ մէջ եւ վրայ իմաստներով:

«Տրտում կամ եւ տխուր ի յայսմ աշխարհիս» (135):

«Բամեալ թռչնոցն դասք յերկրի երեւին» (135):

Ի+հայցական կառոյցով, բացի տեղի պարագայից (ներգոյականի եւ վրայ իմաստներով), կան ժամանակի պարագայի եւ խնդրային որոշ իմաստների դրսեւորումներ:

«Յերկաթ ու ի նեղ զընդամ մեք մտաք» (130):

«Փիլիպոս նստեալ յաթոռ» (տեղի պարագաներ), (184):

«Ի գնալն վարդին եկեալ պուլպուլին» (134):

«Յայս ահագին առուրս, որ հասաք» (ժամանակի պարագաներ) (129):

«Յօտարս եւ ի տնանկս ոչ ողորմեցաք» (130):

«Յանօրինաց ձեռն մատնեցաք» (յանգում), (130):

«Եւ խառնիմ ի դասս լուսեղէն» (միասնութիւն), (139):

Նշուած հոլովներով ձայնաւորանախորդ դիրքում գրուել է կրկնակի՝ (ի, յ+), (ի, յ...+) կառոյցներով:

«Ի յերկրի վերայ» (136), (առանձնացուած է ի ... վերայ նախադրութիւնը):

«Տխուր ի յայսմ աշխարհիս» (135):

«Ի յԱրարչէն ...» (134), ի յինէն եւ այլն:

Բացառական հոլովը մշտապէս կազմուել է ի նախդիրով, սակայն բնագիրը կազմուած է ձեռագրական տարբեր տարբերակներով հիման վրայ, հետեւաբար զգացուած է աշխատասիրողի ձգտումը՝ եղածը կանոնակարգել ըստ գրաբարի, այլապէս դժուար է պատկերացնել, որ Ֆրիկի տաղերում տեղ-տեղ պատահում է բացառական հոլովն անանց ի նախդիրի, իսկ Կեչառեցու տաղերում՝ ոչ:

Ֆրիկի տաղերում առկայ է ոճական նկատառումներով (յատկապէս տողավերջում), յանգաւորման համար ի+հայցական կառոյցի գործածում:

«Մի՛ կենաք դուք շատ խոր ի քուն... խիստ ի մօտ եմք յօրն ի մահուն» (145):

Միւս տան երկրորդ տողի վերջում՝ ... ի քուն: Չորրորդ տողի վերջում՝ ... անհուն:

Սոյն գրքի վերջում կան նաեւ խաչատուր Կեչառեցու արձակից մի քանի նմոյշներ (էջ 189-199), որոնցից մէկն է հաստատապէս նրանը համարուած «Վասն գալստեան Աստուծոյ առ մարդիկ» ճառը: Այն գրուած է կանոնաւոր գրաբարով՝ համապատասխան նախդրագործածութեամբ: Այստեղ կայ մի գեղեցիկ բանաստեղծութիւն՝ նուիրուած Մարիամին եւ նրա նորածին Որդուն:

Հեղինակը գրել է, որ ազգութեամբ ղպտի մի կին գրկում է գեղեցկադէմ մանկանը, մաքուր ջրով լուանում է նրան եւ «Գրկեալ գգուանօք՝ երգս քաղցրաձայն մատուցանէր. եւ ասէր.

- Նման է մայր քո արուսեկի, եւ դու նման արեգական. Նման է մայր քո ամպոց ցօղելոյ, եւ դու նման ծիածանի՝ գօտոյն նոյի.

Նման է մայր քո Եղեմական դրախտին,

եւ դու նման ծառոյն կենաց,

Նման է մայր քո ծովուն Եսեբոնի,

եւ դու նման լուսափայլ եւ ոստրածնունդ մարգարտի,

Նման է մայր քո առուրց դարնայնոյ,

եւ դու նման ծաղկին համասպրական.

Նման է մայր քո մեծի թագուհւոյ, եւ դու նման որդոյ թագաւորի» (էջ 192):

Այս տաղում չի գործածուած եւ ոչ մի նախդիր: Այն ժողովրդական ծագում ունի, գրուած է պարզ, վեհաշունչ, որը յիշեցնում է Գրիգոր Նարեկացու «Մա-

տեան»-ում մի քանի հարիւր փող կազմող աննախդիր հատուածները: Մօտաւորապէս այդպիսին են նաեւ խորենացու եւ Գրիգոր Մագիստրոսի (ԺԱ. դ.) կողմից գրի առնուած Հայ ժողովրդական մի քանի չափածոյ բանահիւսական գլուխգործոցները, որոնցում բաւականին սակաւ են նախդրագործածութիւնները: Նշուած չափածոյ ստեղծագործութիւններն այն նմուշներն են, որոնց յենքի վրայ դարեր յետոյ պէտք է ձեւաւորուէր աննախդիր գրական աշխարհաբարը: Այս դիտարկումը եւս հաստատում է մեր այն եզրայանգումը, որ ժողովրդական բանահիւսական չափածոն, ժողովրդական ակունքներից եկող հեղինակային բանաստեղծական խօսքն առանձնապէս յագեցած է են նախդրագործածութեամբ, որի հետեւանքով էլ դրանք պարզ են եւ հեշտ ընկալելի:

Այստեղ յաւելենք, որ նախդրագործածութիւնն ի բնէ յատուկ է եղել թէ՛ բանաւոր եւ թէ՛ գրաւոր Հայերէնին, առաջին հերթին՝ գրաբարին:

Ժողովրդական խօսքը, բառ ու բանը, դրանց սերտօրէն առնչուող չափածոյ խօսքը կարող էին յագեցած չլինել նախդիրներով, բայց առանց նախդրագործածութեան անհնար է պատկերացնել Աստուծաշնչի Հայերէն թարգմանութիւնը, տուածաշնչի Հայերէն թարգմանական եւ ինքնուրոյն գրականութիւնը՝ պատմագրութիւն, փիլիսոփայութիւն, աստուածաբանութիւն, քերականութիւն, տոմարագիտութիւն եւ այլն:

**4. ՆԱԽԴԻՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿԻ (ԺՁ Պ.) ՀԱՅՐԷՆՆԵՐՈՒՄ**

Մ. Աբեղեանը տեղեկացրել է, որ ինքը դեռեւս 1923 թ. իր դասախօսութիւնների «Համառօտութեան» մէջ գրել է՝ որ

«Նահապետ Քուչակ անունով երգիչ իսկապէս եղել է Վանայ կողմերում, բայց կասկածելի է, որ Քուչակի անունով յայտնի երգերը նրանը լինեն: Դրանք ժողովրդական երգեր են, միայն առանձնապէս մշակութիւն կրած»<sup>23</sup>:

Սակայն հետագայում, 1946 թ. հրատարակած «Հայոց Հին գրականութեան պատմութիւն» գրքի Բ հատորում (էջ 417-425) Հայերէնները վերլուծուած են որպէս Նահապետ Քուչակի ստեղծագործութիւններ, իսկ «Հին գուսանական ժողովրդական երգեր» աշխատութիւնում<sup>24</sup> լեզուաբանասիրական ծաւալուն եւ խորը քննութեամբ դրանք ներկայացուել են որպէս ժողովրդական, ոչ թէ հեղինակային ստեղծագործութիւններ:

Սոյն բարձրարժէք ուսումնասիրութիւնն աւարտելիս գրել է. «Այս աշխատանքի վերջում կարծում եմ, թէ պարզուեց, որ միջին Հայերէնով յօրինուած բազմաթիւ անանուն տաղերը, որ կան տաղարանների մէջ՝ անհիմն կերպով վերագրուած են եւ վերագրուած են ԺՁ. դարում ապրած Նահապետ Աշուղ Քուչակին: Դրանք մեր Հին աշխարհիկ քնարերգութեան մնացորդներն են, մի առանձին բանաստեղծական չափով յօրինուած «Հայերէն» կոչուող քնարերգութիւնը, որ սկզբից ի վեր գոյութիւն է ունեցել մեզանում եւ շարունակուել է բերանացի ապրել մինչեւ մեր օրերը»<sup>25</sup>:

Հետագայ շրջանում եղել են եւ կան Աբեղեանի այս տեսակէտն ընդունող, ինչպէս նաեւ՝ ժխտող մասնագէտներ:

Մենք առաջնորդուել ենք այն սկզբունքով, որ յօրինուած, թէ գրուած հայրէնների մի ամբողջական խումբ անցել է 16-րդ դարի մի տաղանդաւոր բանաստեղծի ստեղծագործական քուրաչով, եւ այդ բանաստեղծը Նահապետ Քուչակն է:

Մանուկ Աբեղեանը, քննելով միևնոյն հայրէնների տարբերակների մէջ լեզուական փոփոխութեան հարցը, եզրակացրել է, որ «հայրէնների լեզուն ընդհանրապէս միջին հայերէնն է, բայց մէջը կան նաեւ նոր արեւմտեան հայերէնի կամ տարբեր բարբառների ու ենթաբարբառային շատ ձեւեր», որոնց առկայութիւնը հայրէններում, ըստ հեղինակի, ապացոյց է, որ այդ հայրէնները միեւնոյն հեղինակի յօրինուածքը չեն:

Միաժամանակ, Մ. Աբեղեանը ուշադրաւ եզրայանգում է արել. «... շատ հայրէններ յօրինուած են միջին հայերէնով եւ յետոյ միայն կրել են նոր հայերէնի կամ բարբառային ազդեցութիւններ: Նոր լեզուի եւ տարբեր բարբառների ձեւերը, որ կան այդ հայրէնների մէջ, սկզբնական յօրինողից չեն ծագում, այլ այդ լեզուական շերտաւորումները հետեւում են այդ տաղերի լեզուական վերամոտոգրման»<sup>26</sup>:

Այստեղից կարելի է նաեւ եզրակացնել, որ սկզբնական յօրինողը կամ հեղինակը նահապետ Քուչակն է, որը գրել է միջին հայերէնով՝ նոր հայերէնի ներթափանցմամբ, իսկ նմանատիպ «վարիանտները» եղած բնագրերի վերանորոգուած, լրացուած փոփոխակներ են՝ ոչնչով չգրկելով մեծ բանաստեղծին հեղինակային բնականոն իրաւունքից:

«Իսկ ինչ վերաբերում է այն բանին, որ հայրէնների մէջ կան բազմաթիւ այնպիսիները, որոնք յօրինուած են միջին եւ նոր հայերէնի խառնուրդով, պէտք է կարծել, թէ խառն լեզուով յօրինուածները մեծ մասամբ միջին հայերէնից նորին անցման շրջանին են պատկանում. մինչդեռ մաքուր լեզու ունեցող երգերն աւելի հին ժամանակի գործ են»<sup>27</sup>: Եւ նա այս ամէնը հանգամանորէն ձգտում է ապացուցել «Լեզուի փոփոխութիւնը նոյն հայրէնների վարիանտների մէջ» շարա-

դրանքում (էջ 73-85):

Նա անդրադարձել է նաեւ նախդրագործածութեանը՝ ներկայացնելով նախդիրով (հիմ) եւ առանց նախդիրի (նոր) որոշ ձեւեր. «Յայնժամ - այնժամ: Զիմ տխմար խելքս - իմ տխմար խելքս: Երբ ի ձերն դուռն կանգնիս - երբ ելնես ձեր դուռն կանգնիս: Չես ի սիրելի - չես սիրեր: Ի ծոցս - ծոցս: Ի դէմս ելաւ - դէմս ելաւ: Ի դուրս - դուրս: Զձեռկունքն - ձեռկունքն: Զաղօթք - աղօթք: Յերկնուց - երկնուց: Ի սիրուն պէլան - սիրուն պէլան: Զլին - շին: Ի յափին - ափին»<sup>28</sup>:

Աբեղեանը գրել է նաեւ, որ զ. ի(յ), առ, ընդ, ըստ նախդիրները դեռ կենդանի են միջին հայերէնում՝ «հայրէնների մէջ շատ սովորական են միայն զ. ի(յ) նախդիրները. միևնորայն ընդը կայ երկու դէպքում՝ «ընդ յիս նայէ», «ընդ յինք թողում», («Անահիտ», 1907, Ե., 184): Ի նախդիրը ձայնաւորներից առաջ է՝ յ, իյ, այլ եւ ի, ինչպէս՝ յերկիր (իւե), յայլ աշխարհ, յայն աշխարհ (ձԼԲ), ի յէզին (Կ), ի յայս հալիս (ԿԲ), ի յեզերն (ձԽԳ), ի յերկիր (ձ)» եւ այլն: «Ոտանաւորի վանկերի լրացման համար երեւում է նաեւ զ. ի նախդիրների կրկնութիւն»:  
«Զնախդրի կիրառութիւնն արդէն շփոթուած է: Զօրն ըզքո տունդ մտնուի: Զքո փարչդ պիտէի»<sup>29</sup> եւ այլն:

Գրելով Քուչակի անունով մեզ հասած հայրէններում նախդրագործածութեան մասին՝ միանգամայն տեղին եւ իրաւացի ենք համարում Մանուկ Աբեղեանի դիտողութիւնը. «Հայրէնների լեզուն միակերպ չէ. դրանց մէջ գտնում ենք լեզուական շերտաւորումներ»<sup>30</sup>:

Եւ, քանի որ սոյն հայրէններն ընդունում ենք որպէս նահապետ Քուչակի գրած գործեր, լեզուական հին եւ նոր ներթափանցումները համարում ենք միջին հայերէնով գրող հեղինակի լեզուի ու ոճի իւրայատկութիւնը, որը բացատր-

ում է նաեւ գրաբանի տարրերից դեռեւս չձեռքազատուած եւ աշխարհաբան լեզուական առնչութիւններին միտուած անցումային ժամանակաշրջանում գործածուող միջին հայերէնի իրական վիճակ:

Հայրէններում նախդրագործածութեան քննութիւնն ուղղակիորէն առնչուում է այս խնդիրներին:

Ինչպէս տեսանք, ց նախդիրը չի գործածուել Յրիկի տաղերում եւ Քուչակի հայրէններում: Վերջիններում խիստ սահմանափակ է առ, ընդ եւ ըստ նախդիրների գործածութիւնը:

Երկու հեղինակների գործերում նախդրագործածութիւնը սահմանափակ է յատկապէս տրական եւ հայցական հոլովներում: Գործուն են զ եւ ի նախդիրները, ֆրէզակի հայրէններում բացառական հոլովը ոչ միշտ է կազմում ի նախդիրով: Եթէ Յրիկը նախդիրները գործածում է՝ հետեւելով գրաբարի քերականութիւնում ընդունուած կանոններին՝ առանձին շեղումներով, ապա Քուչակը ոչ միշտ է պաշտպանում նախդրագործածութեան ընդունուած կարգը: Այս ամէնում համոզուելու համար քննենք հայրէններում եղած նախդրագործածութիւնները:

Ա. Առ նախդիր  
Քուչակի հայրէններում շատ քիչ է հանդիպել առ նախդիրի գործածութիւնը:

- ա) Առ + հայցական
- 1) վերաբերութեան անուղղակի խնդիր  
«Զով որ կու սիրէ Աստուած, նա սակաւ մի աստ կու տանջէ, Փորձէ, թէ նա սէր ունի՞ առ Աստուած, չարին համբերէ՞»,  
Թէ գսէրն սրտանց ունի առ Աստուած, նա խիստ յօժար է:

Տանջանքն թուի նմա, թէ իւղով

զանձն կ'օծանէ» (305):

- 2) Ուղեւորման տեղի պարագայ  
«Գանգատ ու զրկած մարդիկ անճարակ են, շատ շիւարբի,  
Դրէք միտ ու դատ արէք, գէտ Աստուած են առ ձեզ եկել» (301):

(=ձեզ մօտ, ինչպէս Աստուած մօտ են եկել):

(Զէտ = ինչպէս, որպէս):

Բ. Չ նախդիր  
Զ նախդիրը Քուչակի հայրէններում գործածուել է միայն հայցական հոլովի հետ՝ նրան հաղորդելով որոշեալութիւն այնպէս, ինչպէս միջին հայերէնում եւ գրաբարում է:

«Գրաբարի բառակապակցութիւններ» աշխատութիւնում Վ. Քոսեանն իրաւացիորէն առանձին չի քննել զ+հայցական կառոյցը, մինչդեռ «Միջին հայերէնի բառակապակցութիւնները» ուսումնասիրութիւնում գրել է, որ այս կառոյցով, «որոշեալութիւնից բացի, արտայայտում են նաեւ հետեւեալ իմաստները». եւ թուարկում է՝ եօթ-ութ խնդիրներ՝ յանգման, հաղորդման, վերածման, վերաբերութեան, միջոցի, ուղիղ խնդրի, շահի, ուղեւորութեան<sup>31</sup>: Դրանք, սակայն, հազուադէպ հանդիպող գործածութիւններ են: Ինչպէս գրաբարում, այնպէս էլ միջին հայերէնում զ նախդիրը հայցական հոլովի հետ հիմնականում գործածուած է որոշեալ առման նկատուածով, բացի մի դէպքից, երբ գրաբարում զ+հայցական կառոյցով կարող է արտայայտուել գործիական հոլովի գաղափար:

«Զի՞ գործես. զմահ (=մահով) աղուեսու սպանից զքեզ» (Բուզ., ԾԴ, 356):

Կան նաեւ որոշ նախդրութիւններ, որոնք պահանջում են զ նախդիր կրող

Հայցականով խնդիր, ինչպէս այդ գրաբարում էր՝ թող զ... իբր զ... իբրև զ... իբրու զ... որպէս զ... քան զ...<sup>32</sup>:

Քուչակի Հայրէններում զ նախդիրը Հայցական Հոլովին նոյնպէս Հաղորդում է որոշեալութիւն, երբեմն այդ բառերի վերջում դրւում է նաեւ ն որոշիչ յօդ:

Չ նախդիրը դրւում է նախադաս լրացման վրայ, սակայն, ինչպէս գրաբարում, յատկապէս՝ յետդասական շրջանում, մասնաւորաբար՝ 9-11-րդ դարերի մատենագրութիւնում առկայ է ըստ դիրքի զ նախդիրի գործածութեան բազմաձևութիւն՝

ա) զ+հայցական, սովորական կիրառութիւն

«Չխելքսի վերայ բերի, զբազուկս արի սիրելի» (255):

«Չպագնի քեզ Հաշուես զամօթուդ տեղն գիտես ոչ» (42):

«Չերկուս ընկերս ո՞նց պահեմ, մէկս հող, մէկս հոգի է» (290):

բ) Չ նախդիրը կրկնում է բազմակի լրացումների դէպքում կամ չի կրկնում:

«Աչացս այլ արցունք թափեմ, գէտ թաթաւ ու գէտ զանձրեւ» (242):

«Իջնում ու պագիկ մ'առնում գղնչին անքեւն ու վերեւ» (242):

գ) Չ+հայցական+ն որոշիչ յօդ:

«Դնէ գղնչիկն ու խմէ» (44):

«Չհամն ալ առի ես այլ, սիրոյ տէր եղայ հետ քեզի» (38):

դ) Առանց գ նախդիրի ն որոշիչ յօդով կիրառութիւն

«Քո սէրդ ալ ոսկի արիբ, իմ սրտիս քորան Հալեցիր» (39):

ե) Հայցականով դրուած դերանուններն անխտիր ստանում են գ նախդիր:

«Առէք զիս յիմ յարն տարէք» (41):

«Այն մանկանն մի նենգել, որ սրտով զքեզ կու սիրէ» (43):

զ) Չ նախդիրի յաւելադիր գործածութիւն ե՛լ լրացման, ե՛լ լրացեալի վրայ

«Եղնիկ մի ջրին խմելն զեղջերաց զշուքն էր տեսեր» (284):

Ի տարբերութիւն Յրիկի ստեղծագործութիւնների, նման օրինակներ Քուչակի Հայրէններում քիչ են:

է) Չ եղչում լրացեալի զ նախդիրի պահպանում լրացման վրայ

«Պատուէր զկանանչ կապան ու զկարմիրն շուտ մ՝ է հագեր» (224):

(Չկարմիրն, փխ. զկարմիր կապան):

«էնց մարդն որ երկու խօսի, զմէկն քաղցր ու զմէկն լեղի» (271):

Այստեղ զեղչում է խօսք(ն) լրացեալը: (Քուչակը եւս յոգնակի Հայցականում չի դնում Հոլովակերտ ու մասնիկ): Այստեղ, անշուշտ, կայ նաեւ թուականի գոյականաբար գործածութիւն:

ը) Ի նախդիրի գործածութիւն զ նախդիրի փոխարէն կամ ընդհակառակն

«Տեսայ ի հոգուս հոգին զարդարուած ու բաղնելուայ» (123) (փխ. զհոգուս հոգին):

«Չամէն տարի յայս ատէնս զով սիրեմ, նա զայն կու տանի...» (փխ. յամէն տարի համտ. յայս ատէնս):

Չաղէկն որ ի դնալ տեսնու, բեր աչեր, որ զինք չի հայի (61), (փխ. յինք չի հայի):

թ) Քուչակը զ նախդիրը տեղ-տեղ գործածում է ոճական նկատառումներով, գրեթէ այնպէս, ինչպէս իր «Մատեան»-ում կիրառել էր Գրիգոր Նարեկացին:

Կան որոշ տաղեր, որոնց սկզբնատողերի մի մասն սկսւում է զ նախդիրով՝ զուգակցուելով ի նախդիրի հետ:

«Քուչակը զ նախդիրը տեղ-տեղ գործածում է ոճական նկատառումներով, գրեթէ այնպէս, ինչպէս իր «Մատեան»-ում կիրառել էր Գրիգոր Նարեկացին:

Կան որոշ տաղեր, որոնց սկզբնատողերի մի մասն սկսւում է զ նախդիրով՝ զուգակցուելով ի նախդիրի հետ:

«Քուչակը զ նախդիրը տեղ-տեղ գործածում է ոճական նկատառումներով, գրեթէ այնպէս, ինչպէս իր «Մատեան»-ում կիրառել էր Գրիգոր Նարեկացին:

Կան որոշ տաղեր, որոնց սկզբնատողերի մի մասն սկսւում է զ նախդիրով՝ զուգակցուելով ի նախդիրի հետ:

«Կանչեմ այդ ծովուդ վրայ, ծովդ ի յակէն թանաք դառնայ,

Չինչ ի շամբն եղեզ որ կայ, ամէնն ինձ գրիչ պիտենայ,

Չինչ ի Հայք երէց եղեր եւ Ստամպոլ եւ ի Հոռոմ արեղայ,

Չինչ ի Խորասան, Մուղրի՝ դանդիշման, որ գիր գիտենայ,

Ամէնն չկարեն կարդալ, զինչ որ իմ սիրտս կայ դուսայ» (251):

Ինչպէս Յրիկի տաղերում, այնպէս էլ Քուչակի Հայրէններում շատ է գործածուած քան+գ+հայցական կապակցութիւնը: Քուչակի Հայրէններում եւս այս կապակցութեամբ ոչ միայն կազմուած է որակական ածականի համեմատական կամ բաղդատական աստիճանը, այլեւ կարող է դրսեւորել պէս, նման, որպէս, ինչպէս ի մաստնեբը՝ Հայցականով խնդրի հետ կազմելով ձեւի պարագայ:

«Աւա՛ղ ու հազար բերան. թ'ինչ խելօք ի՛ անխելացայ.

Քան զկաթն յստակ էի, քան զգարնան ջուր պղտորեցայ» (300):

Երկու դէպքում էլ համեմատութիւն է կազմուած, սակայն առաջինը՝ յստակ որակական ածականի բաղդատական աստիճանն է կազմել (աւելի յստակ էի, քան կաթը), իսկ երկրորդը՝ ձեւի պարագայ է (զարման ջրի պէս պղտորուեցի):

«Քան զասպապ ի ծալն էի, նա տկուկ-տկուկ քակուեցայ.

Քան զմարգրիտ ի շարն էի, անարժան տեղիկ վաթեցայ» (300):

Երկու անգամ կազմուած են ինչպէ՞ս հարցին պատասխանող ձեւի պարագաներ, քանի որ նրանք (քան զասպապ, քան զմարգրիտ) լրացնում են բաղդատեալ ստորոգալները, որոնց ստորոգելիները՝ (ի) զեալները, որոնց ստորոգելիները՝ (ի) ծալն, (ի) շարն, բայանուն գոյականներ են:

«Քան զուռ ես ի վեր վագեր, քան զկարմիր խնձոր բոլորեր,

Պայծառ ես քան զքաջութիւն վարդ, որ Հոտով

զաշխարհս է լցեր» (76):

Առաջին տողում երկու անգամ կազմուել է ձեւի պարագայ, իսկ երկրորդ տողում ցոյց է տալիս, թէ որքան է պայծառ:

Կայ գործածուած նաեւ քանց բառը՝ որպէս նախդրութիւն. այս դէպքում զ նախդիր չի դրւում:

«Պագ տան ու պագ առնուն քանց հարկը տարին կարեւոր» (40):

«Քանց սէրն քաղցրիկ չկայ» (54):

Գ. Ընդ նախդիրը Քուչակի «Հայրենի կարգաւ» գրքի սիրոյ, պանդխտութեան, խոհական ու խրատական 553 հայրէններում, ըստ մեր հաշուարկի, գործածուել է ընդամէնը 76 անգամ: Դրուելով եզակի Հայցականի հետ՝ դրսեւորուել են ուղեորման եւ դաղարման տեղի պարագայի եւ միասնութեան, հաղորդման, ուղղութեան անուղղակի խնդիրների իմաստներ:

ա) Ուղեորման տեղ

«Ծոցիկս է ծոցիդ սովոր, այլ ընդ ո՞ր երթայ, մէկ ասա՛» (137):

«Աստուորս է չորս քյոշա, լոյսն ընդ ո՞ր կելնէ, մէկ ասա՛» (308):

Իսկ մի հայրէնում վիրաւորանք, նոյնիսկ սպառնալիք կայ, որ «խոշ յարը» իրենց թաղից վերցնի իր դռնակը, այն է՝ տունը, կացարանը, ուրիշ տեղ շինի, որպէսզի նրա ձայնը կտրուի իր ականջից:

«Խոշ յար, ա՛մ, քեզի կասեմ, թէ՛ «Վերու զդռնակդ ի թաղէս.

Վերու, այլ ընդ այն շինէ, որ կտրի

ձայնիկը յակնջէս» (161):

Հետեւաբար, «ընդ այն շինել» կը նշանակի՝ որեւէ տեղ այնպէս սարքել, դարձնել, որ նրա ձայնը չլսի: Ընդ այն տեղի պարագայ է կամ՝ ձեւի պարագայ:

Ի տարբերութիւն գրաբարի՝ միջին հայերէնում միասնաբար գործածուել են նաեւ ընդ ի նախդիրները: Նման օրինակներ կան նաեւ Քուչակի հայրէններում: Հանդիպում է նաեւ մի անսովոր գործածութիւն՝ ի ընդ:

«Դարձիր մէկ մ՝ ընդ յիս նայէ, կուլակիդ խոպանն իմ, հոգիս» (129):

«Մակար զինքն ընդ յինք թողո՞ւմ, որ էրի եւ սեւնայ կաշիս» (162):

«Ասով խոցեցիր դու զիս, ես դարիպ երթամ ի ընդ ո՞ր» (228):

Այլ տեղերում էլ, ինչպէս ասուեց, գործածուած կայ ընդ ո՞ր կապակցութիւնը (ընդ+հայց=տեղի պարագայ):

«Ընդ ո՞ր երթայ» (137), «լոյսն ընդ ո՞ր կ'ելնէ, մէկ ասա» (308):

Ուրեմն ընդ ո՞ր կրկնուող կառոյցը, որը, որպէս անուանական յարադրութիւն, ընկալուել է որպէս բառային մի ամբողջութիւն, եւ նրանից առաջ այս դէպքում երթալ տեղափոխութիւն ցոյց տուող բայի պահանջով կարող էր դրուել դէպի իմաստ դրսեւորող ի նախդիր, սակայն այս դէպքում ընդ նախդիրից առաջ, ձայնաւորանախորդ դիրքում ի նախդիրը կարող էր դրուել յ տարբերակով: Դա չի արուել, քանի որ կը պակասէր բանաստեղծական 8 վանկանի տողի մէկ ոտքը: Յայտնի է, որ, ըստ Մ. Աբեղեանի, հայրէնները յամբ-անապետեան բանաստեղծութիւն են՝ կազմուած 15 վանկերից՝ երկակի տողատմամբ՝ 7+8, իսկ յիշեալ տողն իսկապէս ունի 8 վանկ, ուրեմն ի ընդ ո՞ր կապակցութիւնը բնագրային է, ինչպէս ասուեց՝ ընդ ո՞ր մէկ ամբողջական բառի

ընկալմամբ: Սա, անշուշտ, ենթադրութիւն է:

բ) Դադարման տեղ  
«Մակար զինքն ընդ յինք թողո՞ւմ, որ էրի եւ սեւնայ կաշիս» (162):

(Մակար=մի՞թէ, գուցէ, միգուցէ):  
գ) Հաղորդման անուղղակի խնդիր  
«Հարցունք մէկ ընդ իս եղէք» (136), (Հարցունք=հարցմունք):

դ) Ուղղութեան խնդիր  
«Դարձիր մէկ մ՝ ընդ յիս նայէ կուլակիդ խոպանն եմ հոգիս» (129):

ե) Միասնութեան խնդիր  
«Երկուս ընդ իրար կուռին մէկ ի մէկ իսկի չի նմանին» (286):

Դ. Ի նախդիր  
Ինչպէս ասուեց, Քուչակի հայրէններում բազմիցս գործածուել է ի նախդիրը, յատկապէս՝ հայցական հոլովի հետ: Նրանից սակաւ են տրականով կիրառութիւնները, բացառականի կազմում դրուել կամ չի դրուել ի նախդիրը: Ի նախդիրով կան յատկապէս բայական եւ անուանական յարադրութիւններ, որոնք կիրառուել են նաեւ ոճական նկատառումներով:

Այժմ ներկայացնենք ի+տրական եւ ի+հայցական կառոյցներով արտայայտուած իմաստային դրսեւորումները:

ԽՆԴԻՐՆԵՐ

- 1) Յանգաման անուղղակի խնդիր  
ա) ի+տրական  
«Յնգեր մօտեցել է նաւս, կու վախեմ քարի դիպենայ» (293)<sup>33</sup>:  
«Ի յանանցական հրոյն զիս դէմ տամ՝ զքեզ ազատեմ» (282):  
Վ. Քոսեանը գրել է. «Նախդիրը բանաստեղծական խօսքում կարող է հոլո-

վածեւից յետոյ էլ դրուել»<sup>34</sup>:

«Ստեղծող, զքո ստեղծած ծառայն մի՛ մատներ ի ձեռն սիրուն,

Թէ ձեռն ի սիրու ձգես, մի՛ մատներ ի խալխի լեզուն» (190):

Սակայն Վ. Քոսեանի գրածում անճշտութիւն կայ, քանի որ նախդրագործածութեան շրջուն շարադասութեամբ հեղինակը ստեղծել է բառախաղ՝ «մի՛ մատներ ի ձեռն սիրուն» եւ «թէ ձեռն ի սիրու ձգես», հետեւաբար, ի նախդիրը «հոլովածեւից յետոյ» չի գործածուել: Դա մասնաւորապէս երեւում է Քոսեանի սոյն գրքի 160-րդ էջում գրուած այլ բացատրութիւնից: Այստեղ բերուած է նոյն տողը՝ «Թէ ձեռն ի սիրու ձգես մի՛ մատներ ի խալխի լեզուն (էջ 190), որը սխալմամբ վերագրուած է Վարդան Այգեկցուն, սակայն ճիշտ բացատրութիւն է տրուած, ըստ որի՝ ի նախդիրը վերաբերում է ոչ թէ ձեռն գոյականին, այլ՝ սէր գոյականի եզակի տրականին. ի+տրական կապակցութեամբ ձգել բայի թելադրանքով դրսեւորուել է յանգաման յարաբերութիւն:

բ) ի+հայցական  
Եթէ ի+տրական կառոյցով յանգաման անուղղակի խնդիր քիչ է գործածուած, ապա ի+հայցական կառոյցով օրինակները զգալի թիւ են կազմում:

Գործածուել են հետեւեալ բայերը՝ առնել, արե՛լ (=արի՛+ել), ելանել, հանդիպել, հասանել, հասուցանել, ձգել, փաթթել եւ այլն:

- «Ձեռքն այլ ի ծառն ձգեց, ծառերու ճղերն երերաց» (73):  
«Ու զինչ որ ունի ամալ՝ գայ ի յոտքն փաթթի նա այլ» (270):  
«Ես ալ ի դեմիկն ելայ» (123):  
«Ձինչ մէկ մ՝ որ ծարաւած լինի եւ ի պաղ աղբիւր հանդիպի» (44):

«Մեծցաւ եւ պարոն եղաւ ու հասաւ ի սրտին մուրատ:

Թէ երթամ ու բարով դառնամ, զամանաթն ի տէրն հասուցէք» (234):

«Երեսդ երեսիս դնեմ, որ դպնու քո շունչդ ի հոգիս» (145):

«Թելիկ շահենի առի, լուկ հասայ ի յեզր ծովուն» (205):

«Մօտ ի յալին ես եկեր, զիս սարսափն ու դողն է պատեր» (297):

2) Հաղորդման  
Կազմում է ասացական բայերի թելադրանքով՝

ա) ի+տրական  
Գամ զգանգատս ո՞ւմ անեմ, որ երթար իմ յարոջն ասէր» (45):

բ) ի+հայցական  
Հիմնականում այն կազմում է ասել, յօսել բայերի թելադրանքով:

«Աչերս ի յիս ասաց» (82):  
«Թուխն այլ ի բարակն ասաց» (151):  
«Կաւիկն ի բրուտն ասաց. «Մի դատիր ողորմ ու լալի...» (279):

«Օձերն ի ձագերն ասեն» (281):  
«Ձկնիկն ի գինին ասաց» (282):  
«Ծովն այլ դէպ ի յիս ասաց» (282):  
«Այսօր ի յիս մի՛ խօսիլ, խոց ունիմ, որ ինձ հերիք է» (64):

«Դեռ յորդորեցաւ սրտիկս՝ որ բերանովս ի քեզ խօսեցայ» (120):

«Սրտիս ալ ո՞նց տամ համբեր, երբ լեզուովդ ի յիս չի խօսիս» (141):

- 3) Սահմանափակման  
ա) ի+տրական  
«Ասիր դու ի քո մտին...» (155):  
բ) ի+հայցական  
«Կուլամ ես ի յիմ սրտիս, ծիծաղիմ վասն աստնուորիս» (167):

- 4) Համապատասխանություն  
ա) Ի+տրական  
Քո սէրն ի ծրծու մման հաւասար ոսկերքս է ցրուեր (178):  
(ծուծ՝ ծրծու=ոսկրածուծ):  
բ) Ի+հայցական  
«Աչերդ է ի ծով մման, ու ունքերդ ի թն ծիծրունկան» (77):  
«Մարմինդ է ի մաւ մման» (260):  
«Գիտուն մարդն յարեւ մման» (266):
- 5) Վերաբերություն  
Ի+հայցական  
«Այսպէս ի Քրիստոս ասա, դաւանումն է սիրտ, հաւատայ» (306):
- 6) Ուղղություն  
«Գիշերս ես ի դուրս ելայ, ի վերին թաղն նայեցայ» (216):  
«Զեռքն այլ ի ծառն ձգեաց, ծառերու ճղերն երերաց» (73):  
«Սուրբաթ ու ճրագ՝ դրիր, զիս ի քո լոյսդ ձենեցիր» (178):  
«Գնա՛յ, մի՛ հայիր ի յիս» (168):  
«Վախեմ թէ աչերս ուզես, հապա ինչո՞վ հայիմ ի քեզ» (106):
- 7) Փոփոխություն  
«Ա՛յ իմ նշենի ծաղիկ, ծաղկեցար ու դարձար ի մուշ» (105):

ՊԱՐԱԳԱՆԵՐ

1) Տեղի պարագայ

Միջին հայերէնում եւս կան ուղեւորման եւ դադարման տեղի պարագաներ, ըստ որում՝ տրական եւ հայցական հոլովներով տեղի պարագայ են կազմում առ, ընդ եւ ի նախդիրների միջոցով, հայցականում գործածւում է առ ի, բացառականում ց (հազուադէպ), ի (այս հոլովի կազմում), գործիականում՝ առ, գ եւ ընդ նախդիրները: Մինչդեռ Քուչակի հայ-

րէններում տեղի պարագան դրսեւորուել է առ, ընդ (հայցական), ի (տրական, հայցական) նախդիրներով, նաեւ ի նախդիրը՝ բացառականի կազմում:

ա) Ի+տրական

Այս կառոյցով կան տեղի պարագայի իմաստի դրսեւորման մի շարք օրինակներ:

1) Ուղեւորման տեղ

«Գլուխս դրի բարձին, լոք եկեր խօշ եարն ի քովիս» (129):

«Արեկ, զգերիս նայէ, որ անցաւ պատրոյզն ի լերդիս» (162):

«Երբ սէր չես հաներ ի հուն, է՞ր հանես մանուկն յարեւուն» (171)<sup>35</sup>:

«Ոչ խիղճ ի մտին ձգեց» (154): (Բաւացի՝ խիղճը դէպի իր միտքը չձգեց, այլ խօսքով՝ խիղճ չմտաբերեց, չխղճաց):

2) Դադարման տեղ

«Փոքրիկ վաճառական մ'ի, իմ անունն էր թաւաքալի,

Թաւաքալի, Աստուած արի, ձգեցի զնաւս ի ծովի» (284):

«Ամռով ձիւն ո՞վ է տեսել, որ կուգայ ի մանուկ մարդուն» (56) (վրայ):

«Հոգիդ ի պայծառ դունով, որ լոյս տայ քեզ ի մթութեան» (263) (մէջ):

«Զքեզ եղն ի սարին բերէր ու շահէն բազան սնուցեր» (74) (վրայ):

«Իր մէջ էր պագեր գրած, ի յեզերն՝ գիրկ, կարօտ ու լաց» (237):

բ) Ի+հայցական

1) Դադարման տեղ

Գործածական են դադարման բայերը: Քուչակի հայերէններում այդպիսիք են՝ առնուլ, բարձրանալ, դնել, զարկել (=մի բան մի բանի մէջ գամել, դնել), էրել, ընկնել, թաղել, լինել, ծախել, կենալ, մնալ, մտնուլ, պատել, պագնել, վաթել, ցաթել (=ծագել), փայլել

եւ այլն: Դադարման տեղը կարող է արտայայտել մէջ, վրայ, որեւէ տեղ եւ այսպիսի այլ իմաստներ:

«Աւաղ, թէ՛ մեռնիլ պիտէր եւ մտնուլ ի հող եւ ի գնտան» (281),

«Քո յարն ի Հալապ քաղաքն ի շուկան շեքեր կու ծախէ» (244):

«Երեկ եմ տեսեր զքո եարն ի յայգին» (243):

«Ի բարկ կրակին դնեն» (248):

«Ահա ի խաչ բարձրանայ» (310) (վրայ):

«Ես ի հոն կու մնամ» (233):

«Երթամ յարեւոյ լինեմ եւ գամ ի քո ծոցդ կենամ» (64):

«Զար փուշն ի քեզ պատած, որ չկայ ճարակ մտնելու» (203):

«Արեկ մօտ ի յիս նստիր» (54) (ինձ մօտ):

Կան օրինակներ, որտեղ համապատասխան բայը գեղջուած է, բայց գիտակցւում է:

«Իմ եարն ի դարիպոյթին [է, կայ], էր կրակն զիս կու էրէ» (240):

Նոյնպիսին է եւ հետեւեալ օրինակը՝

«Բազան ի յանտառ մորին՝ թէպէտ բու, թէպէտ բազայ է» (267):

«Ղազալն երբ ի ծառն ընկնի, նա տերեն ի վար կու թափի» (283), (ղազալ կամ զազէլ նշանակում է չոր տերեւ: Այսինքն՝ երբ ծառի վրայ չոր տերեւ առաջանայ, տերեւը ներքեւ կը թափուի):

Կայ նաեւ այսպիսի նախադասութիւն՝

«Ես ասեմ, ու դուն լսէ, առ ի քո մտքունքդ անդիճէ» (272): (Ես ասում եմ, ու դու լսիր, վերցրու քո մտքի մէջ, մտածիր): (Անդիճել=մտածել, խորհել, քննել, մտորել, վարանել):

Կայ նաեւ այսպիսի նախադասութիւն՝

«Ես ասեմ, ու դուն լսէ, առ ի քո մտքունքդ անդիճէ» (272): (Ես ասում եմ, ու դու լսիր, վերցրու քո մտքի մէջ, մտածիր): (Անդիճել=մտածել, խորհել, քննել, մտորել, վարանել):

«Ես ասեմ, ու դուն լսէ, առ ի քո մտքունքդ անդիճէ» (272): (Ես ասում եմ, ու դու լսիր, վերցրու քո մտքի մէջ, մտածիր): (Անդիճել=մտածել, խորհել, քննել, մտորել, վարանել):

«Ես ասեմ, ու դուն լսէ, առ ի քո մտքունքդ անդիճէ» (272): (Ես ասում եմ, ու դու լսիր, վերցրու քո մտքի մէջ, մտածիր): (Անդիճել=մտածել, խորհել, քննել, մտորել, վարանել):

Կայ նաեւ այսպիսի օրինակ՝  
«Աչեր դազալի ունիս, գեմ ունիս ուներ թաթարի,

Ատով խոցեցիր դու զիս ու զարկիր յիս նետ սահարի» (46):

Այստեղ բառախաղ է արուած: Սկզբում գ+հայցական կառոյցով ուղիղ խնդիր է, այնուհետեւ ի(յ)+հայցականով՝ տեղի պարագայ է: Միջին հայերէնի բառարանը եւս հիմք է տալիս նման եզրապահման: Զարկել բայի մի նշանակուած թիւնն է՝ «Հարուածի միջոցով մի բան մի բանի մէջ գամելով ամրացնել»<sup>36</sup>, դնել: Այս իմաստով Քուչակն ունի նմանատիպ մէկ այլ օրինակ եւս (էջ 113):

2) Ուղեւորման տեղ

Նման լրացում ստանում են շարժման բայերը՝ բերել, գալ, գնալ, դառնալ, ելնել, երթալ, հանել, տանել եւ այլն:

«Երբ սէրն ի յաշխարհս եկաւ, եկաւ իմ սիրտս բնակեցաւ» (37):

«Առէք զիս յիմ եար տարէք» (41):

«Հառաչս ի երկինք ելել, երեւնուց ի վար կուգայ ձիւն» (56):

«Իմ եարն այլ ի դուրս ելաւ, շորորաց ի պաղչան գնաց» (73):

«Աչեր կայ, որ ի ծամ տանի, անաղօթք ի յետ կու բերէ» (58):

«Կ'երթայ ի Մսրըն թալան» (77):

«Թէ այլւի ի յիս դառնաս ու կենաս խելացդ ի վրայ» (99):

«Յայդ դաշտէդ ի վայր գայի անարատ սրտովս դէպ ի տուն» (202):

«Զեռկունքս ալ ի յինք տարայ» (235):

«Ով որ քեզ ի յիս բերէ, թէ զհոգիս ուզէ, նա կուտամ» (241):

«Հոգիս ի մարմնոյս ելաւ ի մահունդդ» (247):

3) Ժամանակի պարագայ

ա) Ի+տրակամ

«Մոմի նմանակ ես դուն, զքեզ վառեն ի հայոց զատկին» (182):

«Հոգիդ է պայծառ գունով, որ լոյս տայ քեզ ի մթութեան» (263):

Վերջինս կարող է ցոյց տալ ե՛լ ժամանակ, ե՛լ տեղ (=մուկ ժամանակ եւ մթութեան մէջ):

բ) Ի+հայցական

«Գիշերն երեսիս դնէի ու բարով ի լուսն ելնէի» (98):

Ժամանակի պարագայ է կազմուել նաեւ ի+անորոշ դերբայ կառոյցով:

«Ձաղեկն որ ի գնալ տեսնու, բեր աչքեր, որ զինք չի հայի» (61):

«Ձիւմ եարն ի գնալ տեսայ» նախադասութիւնը կրկնուել է մի քանի հայրէնների սկզբում (էջ 53, 127, 184), որտեղ ի+անորոշ դերբայի հայցականը դրսեւորել է ե՛լ վիճակային յարաբերութիւն, ե՛լ ժամանակի պարագայի ընկալում:

«Ձիւմ եարն ի գնալ տեսայ, կանչեցի՝ պագիկն ի քանի» (53):

կայ նաեւ այսպիսի օրինակ՝

«Ես չեմ ցորեկուան որսիկ, զիս կորսան ի մուկ գիշերով» (122):

Սակայն այստեղ ի նախդիրը դրուած է ձեւականօրէն: Ժամանակի պարագան նա ներկայացրել է կա՛մ ժամանակի մակբայներով, կա՛մ աննախադիր կառոյցով, կա՛մ ժամանակի պարագայ երկրորդական նախադասութեամբ, կա՛մ, ի վերջոյ, նախդրային կառոյցներով եւ նախադրութեամբ, բայց ոչ ի+գործիականով:

4) Նպատակի պարագայ

Նպատակի պարագայի օրինակներ գրքում քիչ կան:

«Հաւերդ ալ իրար եկել եւ արծուին ի տես գնացել» (282):

5) Պատճառի պարագայ

Ի+տրակամ

«Պիւպիւլն ի վարդի սիրուն՝ սեւ ներկեց զշապիկն ու հագաւ» (223):

«Պլպուլն ի վարդի սիրուն՝ համբերէ, զինչ մանչն ի գինուն» (220):

6) Ձեռի պարագայ

Ի+հայցական

«Շնչին պատուհան թողու, բոցն ելնէ ի գոյն ծիրանի» (259):

(Բոցը ելնում է ծիրանի գոյնով կամ ծիրանագոյն):

III. ՀՈՂՈՎԱԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՈՐՈՇ ԻՒՐԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա) ԲԱՅԱՌԱԿԱՆ ՀՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆՆԵՐ<sup>37</sup>

Ինչպէս գրաբարում, այնպէս էլ ԺԳ. ԺԳ. դարերի միջին հայերէնում ձգտում կայ բացառական հոլովը կազմել ի նախդիրով: Այդպէս է Ֆրիկի եւ Խաչատուր Կեչառեցու ստեղծագործութիւններում: Սակայն հետագայում աստիճանաբար այդ նախդիրը սկսում է չգործածուել:

Օրինակ, Քուչակի հայրէններում կան բացառականի կազմութեան ոչ միօրինակութիւններ, որոնք խմբաւորում են՝

ա) սովորական գործածութիւն՝

«Եւ ի յայն արինէ ցողին շունչ տուաւ անկած մեռելին...»

Եւ յայն համբուրէ ծերին լոյս ծագեաց մթան գիշերին» (286):

«Երբ զձուկն ի ջրէն հանեն...» (50):

Այդպէս էլ՝ ի մանկութեան, յերկրէ, ի քեանէ, ի ջրէն, ի ձեր տանէն եւ այլն:

բ) Կան զուգաձեւութիւններ, երբ նոյնիսկ միեւնոյն հայերէնում բացառականի կազմում դրուում է կամ չի դրուում ի նախդիրը: Օրինակ՝

«Ջօճիկն յարեւէն հաներ ու զծաղիկն բերնէն առեր» (226):

«Աչերդ է ծովէն առած, եւ ուներդ է ի թուխ ամպէն» (71):

գ) Կան բազմաթիւ օրինակներ, երբ բացառականի կազմում ի նախդիրն առհասարակ չի դրուում, քանի որ այն այլեւս որպէս հոլովակազմիչ չի դիտուում:

«Վաղունք քնից վեր ելայ» (94):

«Առիւծն առիւծին մսէն թէ հագար տան, նա չուտէ» (273):

«Թէ չէ Ադամայ դրախտէն քեզ կանանչ տերեւ մի չի տան» (293):

«Երբ ես ձեր քաղքէն ելայ, արեգակն էր երկու կանգուն» (116):

«Այն իմ հեռացած ետրէն ով ինձի խապար մի բերէ» (242):

դ) Բացառական հոլովի վերջում մեծ մասամբ դրուում են ս, դ, ն յօդեր:

«Յապա յիմ սրտէս ի դուրս՝ յերկրէ յերկիր թափեցաւ» (37):

«Հիմի ի ծոցուդ ելայ, դեռ աչքերս ի հետ կու հայի» (151):

«Ծագէ լոյս ի քո ծոցէդ, զինչ գարնան կայծակն ի յամպէն» (66):

«Ձուր, գըլգըլալէն կու գաս, ի գետի թ՝ ո՞ր ակնէն կու գաս» (237):

Կայ տարբերակ՝ «թէ գետի ո՞ր ակնէն կու գաս»:

«Անչափ տի գովեմ զքեզ, չուր մի աչերուցդ պագ մի տաս» (117):

«Ծառ մի դրախտէն կառնու, ան մուլքին մէջն կու տնկէ,

Ձուր անմահութեան կառնու, ան ծառին տակէն կու բխէ» (307):

«Այն օրն, երբ մօրէն ծնար, դուն լայիր ամենքն ինդային,

Հանց մաքուր ել աշխարհէս թ՝ երկիր լայ, նա դու ծիծաղիս» (285):

«Ոչ ունիմ համբերութիւն, որ լուսն սհաթ մի քեանէ» (144):

Թէ չէ Ադամայ դրախտէն քեզ կանանչ տերեւ մի չի տան (293) եւ այլն:

ե) Կան օրինակներ, որոնցում բացառական հոլովի կազմում գրուած է կրկնակ ի(յ):

«Հոգիս ի յիսնէ ելաւ» (137):

«Եւ ի յայն արնէ շունչ տուաւ անկած մեռելին» (286):

«Ի յաւազանէն ծնայ, զետ զմարգարիտ, ցոլայի» (286):

«... կայծակ ի յամպէն (66), ի յարեւելից» (309) եւ այլն:

զ) Գրաբարում հազուադէպ է պատահում, որ բացառականը կազմուի առանց ի նախդիրի: Կային որոշ բացառութիւններ, որոնցից մէկն այն էր, որ երբ նոյն բառը կրկնուում էր, առաջինը՝ բացառականով, միւսը՝ հայցականով, ի նախդիրը դրուում էր միայն երկրորդի վրայ: Օրինակ՝ ի տանէ, սակայն՝ տանէ ի տուն, նաեւ երկրէ յերկիր եւ այլն: Այս թափանցել է նաեւ գրական միջին հայերէն, սակայն ոչ միշտ ըստ եղած կանոնի: Օրինակ՝

«Երբ սէրն ի յաշխարհս եկաւ, եկաւ իմ սիրտս բնակեցաւ,

Յապա յիմ սրտէս ի դուրս յերկրէ յերկիր թափեցաւ» (37):

«Բոլոր գիրկ ու ծոց գրած, մէջէ մէջ պագեր կարօտած» (239):

«Կու ձգէ պագիկն օրմէն օր» (130):

«... Յերկրոց երկիր կու գնամ» (231):

Բացառական հոլովի կազմութեան

նշուած բազմաձեւութիւնները, յատկապէս՝ ի, ի(յ) նախդիրի կրկնակ գործածութիւնները Քուչակը կիրառել է նաեւ ոճական նկատառումներով:

**Բ) Ի ՆԱԽԳԻՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ «ԾԵՂՈՒՄՆԵՐԸ»**

Ինչո՞ւ չակերտներում, ոչ թէ՛ շեղումներ: Իսկապէս, բուն գրաբարի նախդրագործածութեան տեսակէտից դրանք շեղումներ են, որոնք յուշում են լեզուական նոր որակի՝ գրական եւ խօսակցական միջին հայերէնի առկայութեան մասին: Սակայն միջին հայերէնի լեզուաբերականական, նաեւ լեզուաոճական տեսանկիւնից դրանք հիմնաւորում են եւ շեղումներ չեն, միաժամանակ ոճական բազմաթիւ նման դրսեւորումներ կրում են հեղինակային լեզուի եւ ոճի անհատականութեան կնիքը: Ինչ որ է, վերադառնանք գրաբարի համեմատ ի նախդիր գործածութեան շեղումներին:

1) Սովորաբար ձայնաւորանախորդ դիրքում դրւում է նաեւ ի նախդիրի յ տարբերակը, սակայն հանդիպում ենք նաեւ հակառակ պատկերի, երբ ձայնաւորով սկսուող բառից առաջ դրւում է ի նախդիր: Կան այդպիսի մի քանի օրինակներ:

«Քան զսէրն այլ քաղցրիկ պտուղ ի աշխարհս չաւտամ թէ լինի» (38):

«Աստուած է ստեղծեր զվարդն ու տուեր փուշն ի ամանս» (183):

«Ղամազն է ի օձ նման» (186):

«Ձաշխարհս այլ ի ափ առի, հայեցայ քան զհայելի» (256):

«Մեռնիլն ինձի շատ լաւ էր, քանց ի այս հալս կենայի» (257):

2) Գրաբարում երբեմն խնդիրն ընկնում էր ի նախդիրով յարադրուած բաղադրիչների միջեւ: Միջին հայերէնում ի

նախդիրի այս կիրառութիւնը աւելի յաճախակի է դառնում: Նման օրինակներ կան Յրիկի, Քուչակի եւ այլ տաղերգուների ստեղծագործութիւններում:

Ի մէջ(ձ), ի միջի(ձ), ի վեր, ի վերայ եւ այլ նախադրութիւնները հիմնականում դրուել են սեռականով, նաեւ հայցականով հոլովուած խնդիրների վրայ:

Բերենք հատուածներ Քուչակից:

«Անձիկդ ալ ի ծուռ եկել եւ ի հոգուս մէջն է դուրացել» (51):

«Ի սրտիս մէջն գամուեցաւ» (44):

«Ձմեռն ի ձնին միջիմ կենայի» (47):

«Ընկայ ի ծովին միջիմ» (233):

«Ձիմ յարն ամանաթ կուտամ, ի վարդին մէջն պահեցէք» (234):

«Եղեգն ի շամբին միջիմ կու ճոճայ» (88):

«Շատ կայ ի յարեւ նման, ի պճղին վերայ կու վազէ» (266):

3) «Նման ածականը, - գրել է Քոսեանը, - լրացումներ է ստանում տրականով, հայցականով, ի+տրական, ի+հայցական կառոյցներով համապատասխանութեան իմաստով»<sup>38</sup>: Օրինակ՝

«Քո սէրն ի ծրծու աման հաւասար ոսկերքս է ցրուեր» (178):

«Ոչ լուսին ի քեզ աման, ոչ արեւ, որ դեռ կու ծագէ» (80):

Պարզում է, որ Քուչակի հայրէններում կան ի+հայցական+աման կապակցութեամբ եւ այլ օրինակներ:

«Ղամազն է ի օձ աման» (186):

«Բերնիկդ է ի շիշ աման, որ վարդին ջրովն է ի լի» (77):

«Աչերդ ի ծով աման, ու ունքերդ ի թեւ ծիծրունկան» (77):

«Գիտունն է ի ծով աման, որ քանի չափես՝ կու տանի,

Անգէտն է ի տիկ աման, փարչ մ'էվել լնուս՝ նա պատռի» (267):

«Անգէտն է ի հուր աման, ուր ընկնի՝ զտեղն կու երէ,

Գիտունն է ի ջուր աման, ուր երթայ՝ կանանչ բուսեր է» (268):

Խոհախրատական մի հայրէնում (էջ 266) բացի ի+հայցական+աման կապակցութիւնից, կայ նաեւ սեռական+աման կապակցութիւն՝ առանց ի նախդիրի, այսինքն, հաշուի առնելով ի+հայցական կառոյցով գործածութիւնների բազմակիւնութիւնը, ի+սեռական կառոյցը որպէս աման ածականի լրացում բնորոշ է Քուչակի լեզուին:

«Աւա՛ղ, մեզ հայիլ պիտի յայն արեւն, որ լոյս կու ծագէ,

Շատ կայ ի յարեւ նման, ի պճղին վերայ կու վազէ,

Գիտուն մարդն յարեւ աման, խօսքն զէտ արեւ կու ծագէ,

Անգէտ մարդն օձու աման, հանապազ զմարդն կու խոցէ» (266):

Գրաբարում աման ածականը ի+տրական եւ ի+հայցական կառոյցներով լրացումներ չի վերցրել<sup>39</sup>: Այսպիսի գործածութիւն չկայ նաեւ Գրիգոր Նարեկացու «Մատեան»-ում:

4) Գրաբարում գործածական են լի ածականը եւ լի, ի լի մակբայները<sup>40</sup>:

Քուչակն ի լի գրաբարեան մակբայը գործածել է ածականական իմաստով:

«Այդ լեռնէդ ի վայր կուգ 'ի, ձեռս ի լի էր փարչ մի գինով,

Իմ եարս ալ ի դէմ դիպաւ, ծոցն ի լի կարմիր խնձորով» (122):

«Իմ եարն ինձ դէմ, դիպաւ՝ ծոցն ի լի կարմիր խնձորով» (132):

Ի նախդիրի նման գործածութիւնը բնորոշ է Քուչակին, քանի որ նա մշտա-

պէս, նոյնիսկ յաւելադիր գործածութեամբ դիմում է ի նախդիրին:

5) Ի նախդիրի նման անսովոր գործածութիւններ շատ կան Քուչակի հայրէններում:

«Մոմն ալ գեմ հայրէն ասաց՝ ողորմած ու սրտէն ի լաց» (52):

Այն յանգաւորել է միւս երեք տողերի հետ (զատրուած, պատկած, ի լաց, վառած):

«Ձիմ եարն ի գնալ տեսայ, կանչեցի՝ պագիկն ի քանի» (53):

(Դարձեալ յանգաւորման նկատառումով):

Գրաբարում գործածական են ի քուն լինել, կամ ի քուն մտանել, ի քուն առնել յարադրութիւնները: Քուչակն ի քուն-ը գործածել է որպէս ստորոգելի:

«Գիշերս ես ի քուն էի» (153):

«Սուտ ի քուն էր» (222):

Եւ քանի որ Քուչակի հայրէնները միայնակ են: Միանման աւարտայանգեր ստանալու համար նա դիմել է ի նախդիրի ոչ սովորական գործածութիւնների:

Նշենք մի քանի օրինակներ եւս:

«Ասցի, թէ երթամ հեռու, ու կտրի սրտիկս ի սիրու,

Ոնց որ գնացի հեռու, լոք դարձան կրակն ի նորու» (60):

«... սիրու տէր արիւր զիս ի քեզ, ... գոյնգոյն վարդեր կայ ի ներս, ... դամ մտնում ի պաղչան ի ներս, ... խնձորով մտնում դէպ ի քեզ» (117):

«Հայ իմ պողպատէ ուրագ, ես թաց փետ, զիս առեր ի տաշ,

Միրես զիս՝ շուտով սիրէ, հան հոգիս, յետ քեզ է ի քաշ» (138):

«... շատ բարձր կերթաս եւ անհուն,

... շատ տեսնուս ջուխտակ եար ի քուս,

... չի վերնայ սնարքն ի գլխուն» (139):

6) Ինչպէս ամբողջ միջնադարի արձակ եւ չափածոյ գրուածքներում, այնպէս էլ Քուչակի հայրեններում ձայնաւորանախորդ դիրքում կրկնուում է ի նախդիրի տարբերակ յն՝ մի երեւոյթ, որն ինչ-որ չափով կար հին եւ միջին դարերի գրաբարագիր բնագրերում: Այս երեւոյթը որեւէ կերպ չի հիմնաւորուած եւ կանոնակարգուած, որովհետեւ նման դիրքում կարող է եւ նախդարային նման յաւելադիր կրկնութիւն չլինել:

Նման օրինակներ արդէն նշել ենք, այժմ յաւելենք մի քանիսը:

«Աէրն երբ ի յաշխարհս եկաւ...» (161):

«Ամուր եմ քարիդ նման, որ մրճիկն ի յիս չի բանի» (42):

«Երբ սէրն ի յիս մնար...» (59):

«Ծագէ լոյսն ի քո ծոցէդ, զինչ գարնան կայծակն ի յամպէն» (66):

«Քո ձայնդ ի յերկիր ելեր...» (72):

7) Կան ի նախդիրի աւելորդ գործածութիւններ, որոնց անդրադարձել է նաեւ Վ. Քոստանը<sup>41</sup>:

«Ես չեմ ցորեկուան որսիկ, զիս կորսան ի մութ գիշերով» (122):

«Աչերս երեսէս ի վար լոկ դանգատ արաւ ի սրտիս» (60):

«Տեսայ ի հոգուս հոգիս գարգարուած ու բաղնելուայ» (123):

«Քո ծոցդ է ի ծով նման, ծովն դեղ կասեն ի ջերման» (96):

«Գնալ ու գալ կասեմ, ատ քո շատ ի սէրդ չի թողով» (229):

«Կամ ի հողվերօքս անցանես» (180)

եւ այլն:

Ի նախդիրի այսպիսի գործածութիւններն առանձնապէս որեւէ նոր իմաստ չեն հաղորդում այս հոլովածեւերին:

8) Ընդհակառակն, կան այլ օրինակներ, որոնցում բացակայում է սպասուելիք ի նախդիրը:

ա) «Քո սէրն է իմ մօրս կաթն, ծով եղեր եւ ոսկերքս է մտեր» (47), փոխարէն՝ (այսուհետեւ՝ փխ) յոսկերքս է մտեր:

Այդ ճիշտ է մէկ այլ հայրենում.

«Արի ու կանգնէ, իմ եար, տե՛ս, քո սէրդ զիս ինչ կանէ.

Հաւսար յոսկերքս է մտեր, կողեկող ի յետ կու հանէ» (49):

բ) «Ես անմեղ կանգնած էի, եկաւ իմ սիրտս գամուեցաւ» (45), փխ. յիմ սիրտս:

Նոյն հայրենի յաջորդ տողում այն ճշգրտուած է.

«Մանկտիք, ձեր արեւնուդ ասեմ, որ այս նետիկս որ յիս գամուեցաւ» (45):

գ) «Տանին գերեզման դնեն, եւ հողով իւր աչքն լցուի (74), փխ. ի գերեզման դնեն»

դ) Երբ զիս արես հանեն, թող ցամքի զինչ

գետ կայ ու ծով (282), փխ. յարես հանեն:

ե) Առնումք զինք, լեռկունքն ելնենք (219), փխ. ի (ընդ) լեռկունքն ելնենք:

9) Միջին հայերէնում բայի խոնարհման համակարգը, դերբայները, յատկապէս մեզ հետաքրքրող ժխտական դերբայի կազմութիւնը Ս. Անթոսեանը ներկայացրել է երկու՝ ԺԲ.-ԺԴ. եւ ԺԵ.-ԺԶ. դդ. շրջաններով: Ըստ Ս. Անթոսեանի՝ ԺԲ.-ԺԴ. դարերում ժխտական դերբայը կազմուում է ի նախդիրով եւ առանց ի նախդիրի, երկու՝ դէպքում էլ՝ անորոշ դերբայի լ ձայնորդով եւ Լ>Ր հնչիւնափոխութեամբ: Օրինակ՝

ա) չէ ի տալ, չեմ ի տար

բ) չի տալ, չի տար:

Իսկ ԺԵ.-ԺԶ. դարերում ինչպէս նշում է հեղինակը. «Զարմանալի օրինաչափութեամբ ... առաջին երկու ձեւերը գործածութիւնից դուրս են գալիս»: Այնուհետեւ յաւելում է. «Առաջին եղանակով ներկայ ժամանակի ժխտականի կազմութեան քիչ օրինակ ունենք»<sup>42</sup>: Նա բերում է երկու օրինակ, որոնցից մէկը Քուչակից է.

«Թէ չես ի սիրել սրտով, սուրբ Սարգիս եւ Աստուած քեզ խոով»: (Ն. Ք. Դիւան, Փարիզ, 1902):

Սակայն Քուչակի հայրեններում պատկերը, կարծէք, այլ է: Կայ ժրխտական դերբայի՝ առանց ի նախդիրի կառոյց.

«Թէ նուշ, թէ շաքար կուտեմ, առանց քեզ չի երթալ ի կուլ» (229):

«... մրճիկն ի յիս չի բանի, ... ոչ ով ի յիս չի հասնի» (42):

Հանդիպում են նաեւ ի նախդիրով ժխտականի մի քանի գործածութիւններ:

«Եկիր եւ ի հոգիս մտար, չես ի տար պահիկ մի դադար» (40):

«Ատով ես առել զիմ շունչ ու հոգիս այլ յիս չես ի տար» (81):

«Այտով[վ] չեմ ի գար ի քեզ, շատ չար կամ ունիս, կու վախեմ» (187):

Իսկ մէկ այլ հայրենում գործածել է երկու կառոյցն էլ:

«Ի՞նչ անեմ կամ ի՞նչ լինամ, չեմ աւտար ու չեմ մոռանար,

Հազար եար կուտան փոխան, չեմ առնոր ու գքեզ չեմ ի տար» (152):

Եզրակացութիւնն: այն է, որ Քուչակի հայրեններում, իսկապէս, գերիշխում է ժխտականի՝ առանց ի նախդիրի տարբերակը, սակայն հայրեններում գործածական է եւ ի նախդիրով կառոյցը, որը միւսին զուգահեռ կիրառուել է յատկապէս ոճական նկատառումով:

Բայական եւ անուանական յարադրութիւններ

Յրիկի եւ Քուչակի ստեղծագործութիւններում կան հիմնականում բայական, նաեւ անուանական յարադրութիւններ, որոնք մեծ մասամբ կազմուած են ի նախդիրով:

Բերենք մի քանի օրինակներ:

Յրիկ, տաղեր

Ի բան տանի, ի գինի ստեղ, ի դարէ դար, ի դէմ առնել, ի դէմ դառնալ, ի դէմ դիպիլ, ի դող հանել, դառնալ ի վերայ, դառնալ ի նորու, դռնէ ի դռու, ելնել ի հուն, ի ծուռ ածել, ի լեւ բերել, ի դող հանել, ոտքն ի խաղ եւ այլն:

Քուչակ, հայրեններ

Ի դէմ ելանել, ի ծուռ գալ, ի հաց ստեղ, ի համ բերել, ի քուն առնել (Սէր կայ, որ ի քուն կանէ), օրն ի բուն եւ այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Ելնելով վերը շարադրուածից, նկատի ունենալով նախդրագործածութիւնը գրաբարում եւ ընդհանրապէս գրական միջին հայերէնի արձակ եւ չափածոյ գրուածքներում, ինչպէս նաեւ՝ Յրիկի տաղերում ու Քուչակի հայրեններում՝ ներկայացուում է համեմատական մի ամփոփ աղիւսակ (Տե՛ս աղիւսակ դ 5):

Ելնելով սոյն աղիւսակում եղած փաստերից՝ կարելի է յանգել հետեւեալ եզրակացութիւններին՝

1) «Նախդրագործածութիւնը գրաբարում» բաժնում նկատի է առնուած գրաբարի դասական (Ե. դ.) եւ ետդասա-

կան (Զ.-Ժ. դդ.) շրջաններում նախդրագործածութիւնը. վերջինս առանձնապէս շատ չի տարբերում Ե. դարում գրաբարի ինքնուրոյն եւ թարգմանական գրականութեան համապատասխան փաստերից, մի հանգամանք, որը չի կարելի ասել միջին հայերէնի համար, քանի որ զգալի տարբերութիւններ կան միջինհայերէնեան երկու ենթաշրջաններում (ԺԲ.-ԺԴ. եւ ԺԵ.-ԺԶ. դդ.) եղած նախդրագործածութիւնում:

2) Համեմատութիւնից պարզ է դառնում, որ ԺԲ.-ԺԴ. դդ. միջին հայերէնում նախդրագործածութիւնն առաւել մօտ է գրաբարին, քան ԺԵ.-ԺԶ. դարերի նախդիրների գործածութիւնը, քանի որ այդ դարերի լեզուում առաւել շատ են աշխարհաբան ներթափանցումները:

3) Յրիկը, ստեղծագործելով ԺԳ. դարում եւ ԺԴ-ի սկզբում, նախդիրների գործածութեամբ առաւել մօտ է գրաբարի եւ գրական միջին հայերէնի ընդհանուր նախդրագործածութեանը:

4) Նահապետ Քուչակի անուամբ հրատարակուած Հայրէնները, ինչպէս երեւում է, հիմնականում ստեղծուել են 16-րդ դարում, երբ գրական միջին հայերէնում աստիճանաբար թուլացել էր գրաբարի ազդեցութիւնը, ընդհակառակը, սաստկացել էին աշխարհաբարի լեզուաքերականական ներթափանցումները, այնուամենայնիւ դեռեւս զգացում էր գրաբարի շունչը, հետեւաբար դեռեւս գործածուում էին նաեւ որոշ նախդիրներ, չնայած ուժեղացել էին նաեւ նախդիրների կիրառման շեղումները եւ աննախդիր գործածութիւնները:

5) Սեռական հոլովով (ընդ+սեռական կառոյց) դարձեալ ընդամէնը բայական մի լրացում է կազմուել՝ փոխարինութեան իմաստով, որի հետ կարող է գրուել նաեւ փոխարէն նախդրութիւնը:

6) Գրաբարում, բացի ի եւ ց նախդիրներից, միւս չորս նախդիրները գործածուել են տրական հոլովով, իսկ միջին հայերէնում Զ նախդիրը եւս չի գործածուել տրականով՝ չկազմելով յանգման անուղղակի խնդիր, եւ դա հասկանալի է, քանի որ գրաբարում զ նախդիրը տրականի հետ գրուել է խիստ սահմանափակ՝ միմիայն հարկանել, հարույ եւ զարկանել բայերի պահանջով՝ դրսեւորելով յանգման յարաբերութիւն:

7) Ե՛ւ գրաբարում, ե՛ւ արձակ ու չափածոյ միջին գրական հայերէնում հայցական հոլովի հետ գործածուել են բոլոր նախդիրները՝ կազմելով խնդրային եւ պարագայական բազմաթիւ իմաստներ: Սակայն Յրիկի եւ Քուչակի չափածոյ գրուածքներում այս հոլովի հետ չեն կիրառուել ըստ եւ ց նախդիրները՝ չդրսեւորելով համապատասխան իմաստներ: Յ նախդիրը խիստ սահմանափակ է գործածուել նաեւ գրաբարում, իսկ միջին հայերէնում անգամ յաճախ չի գրուել հայցականի հետ, իսկ բացառականի հետ նշուած մէկ-երկու գործածութիւնը պարզապէս պատահական է:

8) Գրաբարում՝ ամբողջովին, իսկ արձակ եւ չափածոյ միջին գրական հայերէնում ոչ միշտ է բացառական հոլովը կազմուել ի նախդիրի միջոցով:

Ինչպէս ԺԴ. դարի յիշատակարաններում, որոշ չափով Յրիկի, աւելի շատ Քուչակի ստեղծագործութիւններում բացառական հոլովը կազմուել է նաեւ առանց ի նախդիրի: Բացառական հոլովի հետ արձակ եւ չափածոյ շրջանի գրական հայերէնում անգամ ձեւականօրէն են գրուել առ(նաեւ առ ի(յ), գ, ընդ(նաեւ ընդ ի) նախդիրներ, կայ նաեւ ց նախդիրի յաւելման մէկ-երկու դէպք, որը, ինչպէս ասուեց, պարզապէս պատահական է:

Յրիկի տաղերում հազուադէպ է

հանդիպում գ+բացառական կառոյցով պատմական . բացառականի դրսեւորում, իսկ Քուչակի հայրեններում նման կիրառութիւն չկայ:

9) Գործիական հոլովի հետ գրաբարում, արձակ եւ չափածոյ գրական միջին հայերէնում գրուել են միայն առ, գ, ընդ նախդիրները՝ հիմնականում կազմելով տեղի եւ ժամանակի պարագաներ: Յրիկի եւ Քուչակի ստեղծագործութիւններում գործիական հոլովի հետ որեւէ նախդիր չի գործածուել:

10) Հիմնականում յաճախական են ի եւ զ նախդիրների գործածութիւնները. միջին հայերէնում զ նախդիրը, ինչպէս ասուեց, հիմնականում գործածուել է հայցական հոլովի հետ եւ այն էլ որոշեալութեան հաղորդմամբ, իսկ ի նախդիրով կազմուել են շարահիւսակամ մի շարք կիրառութիւններ՝ բայական ու անուանական յարաբերութիւններ: Սա դարերի ընթացքում այս նախդիրների կիրառման կրած փոփոխութիւնների տրամաբանական աւարտն է: Ե.-Ը. դարերում ի նախդիրի համեմատուելու հետ կազմուել էր զ նախդիրը, թեամբ աւելի գործուն էր զ նախդիրը, այնուհետեւ Թ.-ԺԱ. դարերի մատենապահական երկերում աստիճանաբար տեղի է ունենում այս նախդիրների գործածուելու թեան յաճախականութեան փոխատեղում, որն իր վերջնական հանգուցալուծմանն է հասնում յատկապէս ԺԴ.-ԺԶ. դարերի գրական միջին հայերէնում:

11) Միջին հայերէնում նախդրագործածութեան յաճախականացող շեղումները, յատկապէս մի նախդիրի՝ մէկ այլը, յատկաբար փոխարինուելը, նախդրանախդիրով փոխարինուելը, գրութեան ձեւական կիրառութիւնները, դրութեան ձեւական կիրառութեամբ, նախդիր-նախդիրները նախադրութեամբ, նախդիր-նախադրութիւններն այս կամ այն թեք հոլովներով եւ կապային ձեւերով փոխարինուելը հաստատում են այն փաստը, որ աստիճանաբար յաղթանակում է նոր

հայերէնը:  
Իսկապէս, նախդրագործածութիւնը գրաբարի եւ աշխարհաբարի կարեւորագոյն բաժանարար գիծն է: Երբ դադարում են կանոնաւորապէս գործել նախդիրները, գրաբարն իր տեղն աստիճանաբար զիջում է միջին հայերէնին, իսկ երբ այս գործընթացը հասնում է աւարտին, վերջնականապէս յաղթանակում է աշխարհաբարը:

ՇԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 Ըստ Կարստի՝ միջին հայերէնը ընդգրկում է Ժ.-ԺԵ. դարերը, Ս. Ղազարեանն ընդունել է Ժ.-ԺԷ. դարերը, Գ. Ջառուկեանը՝ ԺԲ.-ԺԶ. դարերը՝ որանք ներկայացնելով երկու ենթաշրջաններով՝ ԺԲ.-ԺԴ., ԺԵ.-ԺԶ. դարեր, իսկ «Ակնարկներ միջին գրական հայերէնի պատմութիւն»-ում ընդունում է ԺԲ.-ԺԴ. եւ ԺԵ.-ԺԷ. դարերը՝ երկու ենթաշրջաններով (հտ. Ա, էջ 44): Մենք առաջնորդուել ենք Գ. Ջառուկեանի շրջանաբաժանմամբ:
- 2 Ակնարկներ միջին գրական հայերէնի պատմութեան, Եր., հտ. Ա, 1972, էջ 427:
- 3 Տե՛ս Վ. Քոսեան, Միջին հայերէնի բառակապակցութիւնները, Եր., 1984, էջ 158-186:
- 4 Վ. Քոսեան, Գրաբարի բառակապակցութիւնները, Եր., 1980:
- 5 Գ. Մանուկեան, Աշխ., էջ 1-36:
- 6 Տե՛ս «Հանդէս Ամսօրեայ», 2001, էջ 1-36:
- 7 Վ. Քոսեան, Միջին հայերէնի բառակապակցութիւնները, էջ 167:
- 8 Վ. Քոսեան, Միջին հայերէնի բառակապակցութիւնները, էջ 168:
- 9 Լ. Յովսէփեան, ԺԳ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարանների լեզու, Եր., 1997, էջ 108:
- 10 Հ. Արսէն Վ. Այտընեան, Բնական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիէննա, 1866: Արտատպութիւնը՝ Եր., 1987 թ.:
- 11 Վ. Քոսեան, Աշխ., էջ 160, հմմտ., էջ 170, տող վ. 7-8:
- 12 Հայոց հին եւ միջնադարեան բանաստեղծութեան քրեստոմատիս, Եր., 1979, էջ 110-119:
- 13 Յրիկ, Տաղեր, առաջաբանը, բնագրի պատրաստումը եւ յատկութիւնը՝ Ա. Տ. Ղազարեանի, Եր., 1982:
- 14 Նահապետ Քուչակ, Հայրենի կարգաւ, Եր., 1957:
- 15 Յայտնի վէճը Նահապետ Քուչակ բանաստեղ-

ծի անձի եւ նրա հայրենիքի, ինչպէս նաեւ քու-  
չակեան նոյն հայրենիքի վերաբերեալ ի վեր-  
ջոյ յանգում է այն տեսակետին, որ յիշեալ  
ստեղծագործութիւններն անցել են մեծատա-  
ղանդ մի բանաստեղծի ստեղծագործական քու-  
րայով, եւ դրանք ամբողջովին համարել բուն  
ժողովրդական ստեղծագործութիւն՝ համոզիչ  
չէ: Եւ քանի որ այս հարցը վերջնական լուծում  
չի ստացել, նպատակայարմար է այդ հայրեն-  
ները եւ ոչ թէ տարբեր դարաշրջաններում  
ստեղծուած հայրենները, վերլուծել որպէս Նա-  
հապետ Քուչակի ստեղծագործութիւններ:

- 16 Ա. Ղանալանեան, *Ճրիկի կեանքն ու տաղերը*,  
նշ. աշխ., էջ 7:
- 17 Երեղ, եարաղ = այստեղ՝ պատրաստութիւն:
- 18 Գ. Ջահուկեան, *Հայոց լեզուի զարգացումը եւ  
կառուցումը*, Եր., 1969, էջ 48:
- 19 Ռ. Ղազարեան, Հ. Աւետիսեան, *Միջին հայե-  
րէնի բանարան*, հտ. II, Եր., 1987, էջ 431:
- 20 Յովհաննէս Երզնկացի, *Բանք չափաւ*, Եր.,  
1986, էջ 35, եւ իԸ: Նահապետ Քուչակ, *նշ.  
աշխ.*, էջ 270:
- 21 Մ. Թ. Աղալբեգեան, *Խաչատուր Կեչառեցի*,  
Եր., 1958:
- 22 Մ. Աբեղեան, *Երկեր*, հտ. Բ, էջ 241, 538:
- 23 Մ. Աբեղեան, *Երկեր*, հտ. Բ, էջ 16:

- 24 *նշ. աշխ.*, էջ 16-280:
- 25 *նշ. աշխ.*, էջ 279-280:
- 26 *նշ. աշխ.*, էջ 85 (ընդգծումը մերն է):
- 27 *նշ. աշխ.*, էջ 83:
- 28 *նշ. աշխ.*, էջ 83:
- 29 *նշ. աշխ.*, էջ 66:
- 30 *նշ. աշխ.*, էջ 53:
- 31 Վ. Քոսեան, *նշ. աշխ.*, էջ 167:
- 32 Գ. Թոսունեան, *նշ. աշխ.*, էջ 101:
- 33 Հմմտ. Յովհ. Երզնկացի, *նշ. աշխ.*, էջ 32
- 34 Վ. Քոսեան, *նշ. աշխ.*, էջ 164:
- 35 Տե՛ս Վ. Քոսեան, *նշ. աշխ.*, էջ 177
- 36 Տե՛ս Ռ. Ղազարեան, Հ. Աւետիսեան, *նշ. աշխ.*,  
հտ. Ա, էջ 211:
- 37 Բացառական հոլովի կազմութեան մասին տե՛ս  
Վ. Քոսեան, *նշ. աշխ.*, էջ 117-129, Լ. Յովսէ-  
փեան, *նշ. աշխ.*, էջ 70-74:
- 38 Վ. Քոսեան, *նշ. աշխ.*, էջ 61:
- 39 Հմմտ. ՆՀԲ, Բ, էջ 430:
- 40 Տե՛ս ՆՀԲ, Ա, 885:
- 41 Վ. Քոսեան, *նշ. աշխ.*, էջ 163, 164:
- 42 Ակնարկներ միջին գրական հայերէնի պատմու-  
թեան, հտ. Ա, էջ 377:

**ԱՂԻԻՍԱԿՆԵՐ**  
ՆԱԽԴԻՐԱԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ  
ԳՐԱԲԱՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԵԱՄԲ

Աղիսակ N 1

| Նախդրագործածութիւնն ըստ հոլովների<br>կիրառման՝ գրաբարում |           |   |     |     |      |   |                           | Նախդրագործածութիւնն ըստ հոլովների<br>կիրառման՝ միջին հայերենում |           |   |     |     |      |   |                           |
|--|-----------|---|-----|-----|------|---|---------------------------|---|-----------|---|-----|-----|------|---|---------------------------|
| հոլով-<br>ներ  | Նախդիրներ |   |     |     |      |   |                           | հոլով-<br>ներ   | Նախդիրներ |   |     |     |      |   |                           |
|  | Առ        | Զ | Ընդ | Ըստ | Ի(յ) | Ց | գոյգ<br>գործածու-<br>թիւն |   | Առ        | Զ | Ընդ | Ըստ | Ի(յ) | Ց | գոյգ<br>գործածու-<br>թիւն |
| Ս  |           |   | +   |     |      |   |                           | Ս   |           |   | +   |     |      |   |                           |
| Տր.  | +         | + | +   | +   | +    |   |                           | Տր.   | +         | - | +   | +   | +    |   | առ ի(յ)                   |
| Հ.   | +         | + | +   | +   | +    | + | առ ի(յ)                   | Հ.  | +         | + | +   | +   | +    | + | առ ի(յ),<br>ընդ ի         |
| Բ.   | +         | + | +   | +   | +    | - | առ ի(յ)                   | Բ.  | +         | + | +   | -   | +    | + |                           |
| Գ.   | +         | + | +   |     |      |   |                           | Գ.  | +         | + | +   |     |      |   |                           |
| Ընդա-<br>մենը  | 4         | 4 | 5   | 3   | 3    | 1 | 2                         | Ընդա-<br>մենը   | 4         | 3 | 5   | 2   | 3    | 2 | 3                         |

ՆԱԽԴԻՐԱԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՄԲ ԽՆԴՐԱՅԻՆ ԻՄԱՍՏՆԵՐԻ ԴՐՍԵՒՐՈՒՄՆԵՐԸ ՄԻՋԻՆ  
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ՝ ԳՐԱԲԱՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԵԱՄԲ  
(ԱՐՁԱԿ ԵՒ ՀԱՓՈՅՈՅ ԳՐՈՒԾԵՆԵՐԸ ՄԻԱՍԻՆ ՎԵՐՑՐԱԾ)

Աղիսակ N 2 ա

| հոլով-<br>ներ | Հաղորդման    |                    | Համապատաս-<br>խանութեան |                               | Համեմատու-<br>թեան |    | Հանգաման            |                               | Հաջորդակա-<br>նութեան |    | Մատուցման    |        | Միասնութեան |            |
|---------------|--------------|--------------------|-------------------------|-------------------------------|--------------------|----|---------------------|-------------------------------|-----------------------|----|--------------|--------|-------------|------------|
|               | I            | II                 | I                       | II                            | I                  | II | I                   | II                            | I                     | II | I            | II     | I           | II         |
| Ս.            |              |                    |                         |                               |                    |    |                     |                               |                       |    |              |        |             |            |
| Տր.           | առ           | առ<br>ընդ          | ընդ<br>ըստ              | ի<br>ընդ<br>ըստ               |                    |    | առ<br>գ<br>ընդ<br>ի | ընդ<br>ի                      |                       |    |              |        | ընդ<br>առ   | ընդ<br>ըստ |
| Հ.            | առ<br>ի<br>g | ի<br>գ<br>ընդ<br>g | առ<br>ըստ               | ըստ<br>առ<br>ընդ<br>ի<br>առ ի |                    |    | ընդ<br>ի<br>g       | ի<br>առ<br>գ<br>առ ի<br>ընդ ի |                       |    | առ<br>ի<br>g | ի<br>g | առ<br>ընդ   | ընդ        |
| Բ.            |              |                    |                         |                               |                    |    | գ                   | գ                             | ըստ                   |    |              |        |             |            |
| Գ.            |              |                    |                         |                               | առ                 |    | գ<br>ընդ            |                               |                       |    | ընդ          | ընդ    |             |            |
| ընդա-<br>մենը | 4            | 6                  | 4                       | 8                             | 1                  | -  | 10                  | 8                             | 1                     | -  | 4            | 3      | 4           | 3          |

Աղյուսակ N 2 բ

| Միջոցի   |          | Ներգործման |    | Սահմանափակման         |                     | Վերաբերություն |                     | Վերածման |               | Ուղղություն           |  | Փոխարինման |     | Ընդամենը                           |                                    |
|----------|----------|------------|----|-----------------------|---------------------|----------------|---------------------|----------|---------------|-----------------------|--|------------|-----|------------------------------------|------------------------------------|
| I        | II       | I          | II | I                     | II                  | I              | II                  | I        | II            | I                     | II   | I          | II  | I                                  | II                                 |
|          |          |            |    |                       |                     |                |                     |          |               |                       |  | ընդ        | ընդ | 1                                  | 1                                  |
|          |          | առ         |    | առ<br>ընդ<br>ըստ<br>ի | ի                   | ընդ            |                     | ընդ      |               | ընդ                   | ի  | ընդ        | ի   | 18                                 | 13                                 |
| ընդ<br>ի | զ<br>ի   | առ         |    | առ<br>ընդ<br>ի        | առ<br>ընդ<br>ի<br>զ | առ<br>ընդ      | առ<br>զ<br>ընդ<br>ի | ի        | ընդ<br>զ<br>ի | առ<br>ի<br>ընդ        | ի<br>առ<br>ընդ<br>զ<br>առ<br>ի<br>ընդ<br>ի | ընդ<br>ի   | ի   | 27+ հայց<br>զ(որոշյա-<br>լություն) | 36+ զ<br>(որոշյա-<br>լություն)     |
|          |          | առ         |    | առ<br>առ<br>(իզ)      | զ<br>զ              | զ              | զ<br>ընդ            |          |               | զ                     |  |            |     | 7+ի<br>(բացառա<br>կանի<br>կազմում) | 5+ի<br>(բացառ<br>ականի<br>կազմում) |
| ընդ      | զ<br>ընդ | առ<br>ընդ  |    |                       |                     |                |                     |          |               | զ<br>(նաեւ՝<br>շուրջ) | զ<br>(շուրջ)                               |            |     | 8                                  | 4                                  |
| 3        | 4        | 5          | -  | 9                     | 7                   | 4              | 6                   | 2        | 3             | 6                     | 8  | 4          | 4   | 61+2                               | 59+2                               |

Աղյուսակներում I - գրաբարում, II - միջին հայերենում

ՆԱԽԴՐԱԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՄԲ ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ ԻՄԱՍՏՆԵՐԻ ԴՐՍԵՒՈՐՈՒՄՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԳՐԱԲԱՐԻ ՀԱՄԵՍԱՏ

Աղյուսակ N 3

| Հոլովներ | Տեղի            |                            | Ժամանակի        |           | Պատճառի                      |           | Ջեռի          |                | Նպատակի                      |              | Հիմունքի   |    | Չափի   |    | Վիճակի   |    | Պայմանի |    | Ընդամենը |    |    |
|----------|-----------------|----------------------------|-----------------|-----------|------------------------------|-----------|---------------|----------------|------------------------------|--------------|------------|----|--------|----|----------|----|---------|----|----------|----|----|
|          | I               | II                         | I               | II        | I                            | II        | I             | II             | I                            | II           | I          | II | I      | II | I        | II | I       | II | I        | II |    |
| Ս.       |                 |                            |                 |           |                              |           |               |                |                              |              |            |    |        |    |          |    |         |    |          |    |    |
| Տր.      | ընդ<br>ըստ<br>ի | առ<br>ընդ<br>ի             | ընդ<br>ի        | ընդ<br>ի  | առ, ի<br>(սահմանափակ<br>ման) | առ<br>ընդ | ըստ<br>ի      | ի              | առ, ի<br>(սահմանափակ<br>ման) | ի            | ըստ<br>ըստ |    |        |    | ըստ<br>ի |    |         |    |          | 15 | 10 |
| Հ.       | ընդ<br>ըստ<br>ի | առ ի<br>առ<br>ընդ<br>ի     | ընդ<br>ըստ<br>ի | ընդ<br>ի  | առ                           | ընդ<br>ի  | զ<br>ընդ<br>ի | առ<br>ընդ<br>ի | առ<br>ի                      | ի<br>առ<br>ի |            |    | ի<br>զ | -  |          |    | ընդ     |    | 18       | 14 |    |
| Բ.       | ընդ             | զ<br>(տեղ.<br>սահմանափակ.) | առ              | ընդ       | առ                           | ընդ       |               |                | առ<br>զ                      |              | զ          |    |        |    |          |    |         |    |          | 6  | 3  |
| Գ.       | առ<br>զ<br>ընդ  | առ<br>զ<br>ընդ             | առ              | առ<br>ըստ | առ                           |           | ընդ<br>ընդ    |                |                              |              |            |    |        |    |          |    |         |    |          | 6  | 6  |
| Ընդամենը | 13              | 11                         | 9               | 7         | 5                            | 5         | 6             | 5              | 6                            | 3            | 2          | 1  | 2      | -  | 2        | -  | -       | -  | 1        | 45 | 33 |

ՆԱԽԴՐԱԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՄԲ ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆՍՈՒԹԵԱՆ ԾԱԽԼԸ

Աղյուսակ դ 4

|          | Գրաբար | Միջին հայերեն | Ընդհանուր տարբերություն |
|----------|--------|---------------|-------------------------|
| առ       | 13     | 8             | -5                      |
| զ        | 4      | 1             | -3                      |
| ընդ      | 8      | 11            | +3                      |
| ըստ      | 6      | 1             | -5                      |
| ի(զ)     | 9      | 10            | +1                      |
| զ        | 2      | 1(տ.պ)        | -2                      |
| Ընդամենը | 42     | 32            | +4, -15                 |

ՆԱԽԴՐԱԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ՀԱՍԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԵՍԱՏԱԿԱՆ ԱՂԻՄԱԿ

Աղյուսակ դ 5

|     | Նախդադործածությունը գրաբարում |   |     |     |      |   | Ընդհանուր նախդադործածությունը գրական միջին հայերենում |   |     |     |      |   | Նախդադործածությունը Ֆրիկի տաղերում |   |     |     |      |   | Նախդադործածությունը Քուչակի հայերեններում |   |     |     |      |   |
|-----|-------------------------------|---|-----|-----|------|---|---|---|-----|-----|------|---|------------------------------------|---|-----|-----|------|---|---|---|-----|-----|------|---|
|     | առ                            | զ | ընդ | ըստ | ի(զ) | զ | առ  | զ | ընդ | ըստ | ի(զ) | զ | առ                                 | զ | ընդ | ըստ | ի(զ) | զ | առ  | զ | ընդ | ըստ | ի(զ) | զ |
| Ս.  |                               |   | +   |     |      |   | -   | - | +   | -   | -    | - | -                                  | - | +   | -   | -    | - | -   | - | -   | -   | -    | - |
| Տր. | +                             | + | +   | +   | +    | - | +   | - | +   | +   | +    | - | -                                  | - | +   | +   | +    | - | -   | - | -   | -   | +    | - |
| Հ.  | +                             | + | +   | +   | +    | + | +   | + | +   | +   | +    | + | +                                  | + | -   | +   | -    | + | +   | + | -   | +   | -    |   |
| Բ.  | +                             | + | +   | +   | +    | - | +   | + | +   | -   | +    | + | -                                  | + | -   | -   | +    | - | -   | - | -   | -   | +    | - |
| Գ.  | +                             | + | +   | -   | -    | - | +   | + | +   | -   | -    | - | -                                  | - | -   | -   | -    | - | -   | - | -   | -   | -    |   |
|     | 4                             | 4 | 5   | 3   | 3    | 1 | 4   | 3 | 5   | 2   | 3    | 2 | 1                                  | 2 | 3   | 1   | 3    | - | 1   | 1 | 1   | -   | 3    |   |